



ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ
2013-2016թ.թ.

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան

1. Համայնքի իրավիճակի գնահատում

- 1.1. Համայնքի աշխարհագրական դիրքը, պատմական ակնարկ
Ստեփանավանի մասին
- 1.2. Համայնքի ժողովրդագրությունը
- 1.3. Տեղական ինքնակառավարման մարմնի կառուցվածքը
- 1.4. Համայնքի ձեռնարկությունները
- 1.5. Համայնքի ընդհանուր տնտեսական ցուցանիշները
- 1.6. Քաղաքաշինություն. բնակելի և ոչ բնակելի տարածքների
սպասարկում
- 1.7. Հողօգտագործում
- 1.8. Գյուղատնտեսություն
- 1.9. Բնության և շրջակա միջավայրի պահպանություն
- 1.10. Տրանսպորտ և ճանապարհային տնտեսություն
- 1.11. Առևտուր և սպասարկում
- 1.12. Կրթություն
- 1.13. Մշակույթ, սպորտ, երիտասարդության հետ տարվող աշխատանքներ
- 1.14. Առողջապահություն
- 1.15. Հանգստի գոտիներ, զբոսայգիներ, խաղահրապարակներ
- 1.16. Համայնքի ուժեղ կողմերը և հնարավորությունները
- 1.17. Համայնքի թույլ կողմերը

2. Համայնքի քառամյա զարգացման ծրագրի ռազմավարությունն ու նպատակները

3. Համայնքի զարգացման առաջնահերթ նպատակներն ու ծրագրերը՝ ըստ առանձին ոլորտների

- 3.1. Տարածքային զարգացում, քաղաքաշինություն
- 3.2. Բնակարանային-կոմունալ տնտեսություն



- 3.3. Աղբահանություն և փողոցների մաքրում
- 3.4. Կանաչ տարածքների խնամք
- 3.5. Արտաքին լուսավորություն
- 3.6. Թափառող կենդանիների վնասագերծում
- 3.7. Ջրմուղ-կոյուղի համակարգ
- 3.8. Գազմատակարարում
- 3.9. Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն, բարեկարգում
- 3.10. Առևտուր և սպասարկում
- 3.11. Հողօգտագործում և գյուղատնտեսություն
- 3.12. Բնություն և շրջակա բնական միջավայրի պահպանություն
- 3.13. Կրթություն
- 3.14. Մշակույթ
- 3.15. Առողջապահություն, ֆիզիկական կուլտուրա և սպորտ
- 3.16. Աշխատանք և սոցիալական ապահովություն
- 3.17. Ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ /Տեղեկատվական կենտրոններ, հանրային կապեր, տեղեկատվություն/
- 3.18. ^{Վա}Քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքների պաշտպանություն
- 3.19. Արտակարգ իրավիճակներ և քաղաքացիական պաշտպանություն
- 3.20. Տուրիզմի զարգացում
4. **Պետական, մարզային և միջազգային ծրագրերով նախատեսվող, համայնքին առնչվող իրականացվելիք միջոցառումներ**



Ստեփանավան համայնքի քառամյա ծրագիրը՝ նախատեսված 2013-2016թ.թ. համար, իր մեջ ներառում է Ստեփանավան համայնքի պատմաաշխարհագրական, ժողովրդագրական, սոցիալ-տնտեսական բնութագիրը, տնտեսական զարգացման միջոցները, համայնքային իրավասությանը ենթակա հատվածի և համայնքում գործող այլ կազմակերպությունների ու կառույցների՝ համայնքի զարգացմանը նպաստող մեխանիզմների մշակումը, տնտեսության առանձին ճյուղերի, նյութատեխնիկական, բնապահպանական, արտադրական ծառայությունների, միջհամայնքային և արտասահմանյան ծրագրերի, տուրիզմի և ժամանցի կազմակերպման, կապիտալ ներդրումների արդյունավետության բարձրացման, ֆինանսական, քաղաքաշինական, կադրային, առևտրի, սպասարկման, կրթական, մարզամշակութային և այլ համալիր ծրագրերի զարգացման ուղիները, Ստեփանավան համայնքի տարբեր ոլորտների նկարագիրը և 2013-2016թ.թ. ակնկալվող առաջընթացը:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1.1. Աշխարհագրական դիրքը, պատմական համառոտ ակնարկ

Պատմական ակնարկ Ստեփանավանի մասին

Ստեփանավանի և շրջակա գյուղերի պեղումները վկայում են, որ հայախոս ցեղերն այստեղ ակտիվ գործունեություն են ծավալել դեռևս մ.թ.ա. 3րդ-ից 1-ին դարերում: Մ.թ. ա. 2-րդից 1-ին դարերում Ստեփանավանն իր շրջակայքով կազմել է Մեծ Հայքի Գուգարք նահանգի Տաշիրի գավառի մի մասը և մտել է Արտաշեսյան թագավորության մեջ: Մ.թ. 1-4-րդ դարերում եղել է Արշակունյաց թագավորության կազմում: 385թ.-ին՝ Մեծ Հայքի բաժանումից հետո, տարածաշրջանը՝ որպես Տաշիրի գավառի մի մաս մնացել է Հայկական մարզպանության կազմում:

9-րդ դարից սկսած Տաշիրում նույնպես սկսել են իշխել Անի-Շիրակի Բագրատունիները: Անիի Բագրատունիների Կյուրիկյան ճյուղի ներկայացուցիչ Դավիթ Անհողինի (989-1048 թթ.)



կառուցում է Հյուսիսային Հայաստանի Գուգարք նահանգի անառիկ Լոռի բերդաքաղաքը ու Շամշուղնից այստեղ է փոխադրում Տաշիր - Ձորագետի թագավորության մայրաքաղաքը:

Լոռի քաղաքի աջ և ահյակ կողմերում տարածվում է հսկայածավալ մի հուշարձան, որը թվագրվում է մ.թ.ա. 2-րդ հազարամյակից, արդեն 23 տարի անընդմեջ պեղվում է և ունի միջազգային նշանակություն: Հուշարձանը բաժանվում է բնակավայրի և դամբարանադաշտի, որոնց ուսումնասիրությունը Հայաստանի հնագույն պատմության վերաբերյալ նոր և շատ կարևոր տվյալներ են հաղորդում: Առաջիկայում այն կդառնա պատմամշակութային արգելավայր:

10-րդ դարում տարածաշրջանն անջատվում է Անի-Շիրակի թագավորությունից և մտնում է Լոռվա կամ Տաշիր-Ձորագետյան թագավորության մեջ: 1105 թվականին մեծ զոհերի գնով սելջուկ Էմիր Իզլիի հրոսակները գրավում են Լոռին: 1118-1122թ.թ. վրաց թագավոր Դավիթ Շինարարը Լոռին մաքրում է թուրք-սելջուկներից և միացնում Վրաստանին:

Վրաց թագավոր Դավիթ Շինարարի օրոք Լոռի գավառը՝ Լոռի բերդաքաղաքով, միացվում է Վրաստանին և հանձնվում Բոլնիսում ապաստանած Սյունիքի հայ Օրբելյան իշխաններին՝ իբրև տիրույթ: Գեորգի 3-րդի և նրա դուստր Թամարա թագուհու ժամանակ արքունիքին մատուցած ծառայությունների համար 1185թ.-ին Լոռին հանձնվում է ամիրսպասալար Սարգիս Զաքարյանին, որից հետո անցնում է նրա որդուն:

Զաքարյանները ծավալել են շինարարական աշխատանքներ, ամրացրել են քաղաքապարիսպները, կառուցել կամուրջներ և այլ շինություններ: Քաղաքը ժամանակին մեծ նշանակություն է ունեցել, որի մասին է վկայում այստեղ համահայաստանյան եկեղեցիական ժողով գումարելու փաստը, որին մասնակցել են հայ եկեղեցու նշանավոր գործիչներ Մխիթար Գոշը, Հովհաննես Սանահնեցին և ուրիշներ:

Ողբերգական է բերդաքաղաքի հետագա պատմությունը: 1228 թվականին Խորեզմի շահ Զալալ Էդդինի հրոսակները պաշարում են քաղաքը, ավերում նրա արվարձանները, սակայն չեն կարողանում խորտակել բերդի դիմադրությունը: Այնուհետև տարածաշրջանն անցնում է ձեռքից ձեռք:

1810թ.ին Լոռի են գալիս Արցախի Հասան Զալալյանները և հավանելով բնակավայրը այնտեղ հիմնում ավան և կոչում իրենց անունով Զալալօղլի՝ այսինքն Զալալի որդի: Մինչև 1930-ական թվականների վերջերը Ստեփանավանի հարավ-արևմտյան եզրին պահպանվում էին



գարգացած միջնադարին վերագրվող եկեղեցու ավերակներ և <<ձորի գլխի>> խաչը՝ խաչքարը, որի վրա գրված էր. <<Կանգնեցավ խաչս ի Ջալալա իշխանեն>>:

Այս ժամանակ Ջալալօղլին (այսօրվա Ստեփանավանը), դառնում է տարածաշրջանի խոշոր բնակավայրը, որը մտնում էր Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառի վարչական տարածքի մեջ: 1801 թվականին Վրաստանի հետ միասին Լոռին բռնակցվում է Ռուսաստանին, որը մեծ խթան հանդիսացավ գավառի սոցիալ-տնտեսական և մշակույթային զարգացմանը:

19-րդ դարի սկզբին արդեն Ջալալօղլիում կային 50-ից ավելի մեծ և փոքր խանութներ, արհեստավորների կրպակներ, փոստատուն, հեռագրատուն, զբոսայգի: Գյուղը բաժանված է եղել հայկական և ռուսական (Սլաբոդկա) թաղամասերի, ունեցել է բավական լայն ու կանոնավոր փողոցներ: Տները եղել են նոր ձևի՝ ի տարբերություն հին գետնատների, տների առաջ եղել են պարտեզներ և ծաղկանոցներ: Տների տանիքները ծածկված են եղել կղմինդրով և ամբողջ բնակավայրը հեռվից կարմիր է երևացել, ունի պատճառով անվանել են նաև «Կամենկա», մինչև օրս դեռ մեծահասակները օգտագործում են այդ անունը: Ջալալօղլում այդ ժամանակ կար 255 տուն 1686 բնակչով:

Դեռևս 1860- ական թվականներին Ջալալօղլիում գործել է երկսեռ դպրոց, որտեղ ավանդում էին հայերեն, ֆրանսերեն և ռուսերեն լեզուներ, պատմություն, աշխարհագրություն, մաթեմատիկա, ֆիզիկա և այլ գիտություններ: Այս դպրոցում է սովորել նաև ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանը: Դպրոցն ունեցել է նաև հարուստ գրադարան, որից օգտվել է քաղաքի բնակչությունը:

1918թ.ի զինված բախում է տեղի ունենում Հայաստանի և Վրաստանի միջև: Ստեղծվում է Լոռու <<Չեզոք գոտին>>: 1919թ.-ից մինչև 1920թ. նոյեմբերը Ստեփանավանը մնում է <<Չեզոք գոտու>> կազմում: Այնուհետև ջալալօղլեցիները և շրջակա գյուղերի բնակիչները իրենց հայտարարեցին Վրաստանից անկախ դրության մեջ: 1921թ. փետրվարի 11-ին Լոռու <<Չեզոք գոտին>> վերացվեց: Խորհրդայնացված Հայաստանի 9 գավառներից մեկն էլ Լոռի-Փամբակի գավառն էր, որի կազմում էր նաև Ստեփանավանն իր շրջակա տարածքներով:

1923-ին Ջալալօղլին անվանվեց Ստեփանավան: Մինչև 1938թ.-ը այն շրջանային ենթակայության քաղաք էր, իսկ 1967թ.ից ի վեր Ստեփանավանը հանրապետական ենթակայության առողջարանային քաղաք է:



Աշխարհագրական դիրքի նկարագիրը

Ստեփանավան համայնքը մտնում է ՀՀ Լոռու մարզի վարչատարածքային կազմի մեջ՝ գտնվելով մարզի գրեթե երկրաչափական կենտրոնում, Ձորագետի միջին հոսանքի աջ և ձախ ափերին: Ընդհանուր տարածքը 5307.9 հեկտար է, որից 1666-ը՝ բնակելի: Քաղաքի ընդհանուր պարագիծը 26.5 կմ է, հյուսիսից հարավ միջին լայնությունը կազմում է 6.3 կմ, իսկ արևելքից արևմուտք երկարությունը՝ 4 կմ: Մայրաքաղաք Երևանից գտնվում է 157 կմ, իսկ մարզկենտրոն Վանաձորից՝ 36 կմ հեռավորության վրա:

Ստեփանավան քաղաքի ամբողջ երկարությամբ՝ արևելքից-արևմուտք անցնում է Հայաստանը ԱՊՀ երկրների հետ կապող Երևան-Թբիլիսի միջպետական նշանակության ավտոմոբիլային մայրուղին՝ Մ3, որը ունի նաև ռազմավարական նշանակություն, սակայն այստեղով իրականացվում են նաև տարանցիկ բեռնա և մարդափոխադրումներ: Ստեփանավանից սկսում են 2 հանրապետական նշանակության ճանապարհներ՝ Ստեփանավան-Յաղդան-Այգեհատ ՀՀ 33 և Ստեփանավան-Պրիվոլնոյե-Ախթյորփի ՀՀ 34: Ստեփանավանից հյուսիս-արևելք մոտ 15 կմ հեռավորության վրա գտնվում է Ստեփանավանի օդանավակայանը, որից ներկայումս թռիչքներ չեն կատարվում:

Համայնքը տեղակայված է Հայաստանի Հանրապետության հյուսիսային մասի Սպիտակի երկրաշարժի օջախի բարձր աստիճանի սեյսմիկ ռիսկի գոտում:

Ծովի մակերևույթից գտնվում է 1375 մ ? / 1480 մ ?? միջին/ բարձրության վրա: Համայնքի կլիման չափավոր խոնավ է, ձմեռը մեղմ է. չափավոր ցուրտ, ամառը՝ չափավոր տաք, համեմատաբար խոնավ: Գերակշռում են արևոտ, չափավոր խոնավ և ամպամած, անձրևոտ եղանակների տիպերը: Ամռանը միջին ջերմաստիճանը կազմում է 18 °C, իսկ առավելագույնը՝ 35°C: Ամռան ամսական տեղումների միջին քանակը հասնում է 55 մմ-ի, առավելագույնը՝ 135 մմ-ի, օդի հարաբերական խոնավություն նույնիսկ ցերեկը հազիվ է իջնում 30%-ից: Բուսականության համար խոնավության պայմանները բարենպաստ են: Համայնքում անսառնամանիք օրերի թիվը տատանվում է 150-180 օր, տեղումների տարեկան միջին քանակը 687 մմ է, տեղումների մեծ մասը գրանցվում է տարվա տաք ամիսներին: Քամու միջին արագությունը՝ 1.9 մ/վրկ, հարաբերական միջին տարեկան խոնավությունը՝ 73%:



Ստեփանավանի մակերևույթի կազմությունը բնութագրվում է բարձր լեռնաշղթաներով: Քաղաքի ամենացածր բացարձակ թվանիշը 1000 մ է (Ձորագետի լանջերի ստորին հոսանքի ուղղությամբ), ամենաբարձրը՝ Թողար սարը (Բազումի լեռնաշղթա)՝ 2796 մ:

Վերոհիշյալ սարերի համակարգում գետեղված է Լոռի հարթավայրը, որը թույլ թեքված է դեպի արևելք: Տարածաշրջանը հարուստ է հանքային ջրերով, տորֆի և այլ բուժիչ ցեղերով, կլիմայաբուժության համար բարենպաստ պայմաններով և տեղամասերով, ինչպես նաև՝ պատմամշակութային, հնագիտական հուշարձաններով:

Ստեփանավանի առաջին հատակագիծը կազմվել է 1957թ.-ին/ ճարտարապետ Հ. Դավթյան/ , 2-րդ՝ 1962թ.-ին /ճարտարապետ՝ Ս. Կարապետյան/ , 1971-ին կազմվեց Ստեփանավանի 3-րդ գլխավոր հատակագիծը՝ 2000թ.-ի հեռանկարով/ ճարտարապետներ Լ. Մխիթարյան, Պ. Թունյան, Մ. Գնունի/, սակայն 1988թ. երկրաշարժը մեծ ավերածություններ արեց նաև Ստեփանավանում : Հետագա տարիներին քաղաքն սկսեց արագ վերակառուցվել՝ տարածվելով նաև Ձորագետի ձախ ափին: Քաղաքի վերջնական գլխավոր հատակագիծը հաստատվել է 2005թ.-ի դեկտեմբերի 25-ին, որի հեղինակներն են <<Հայնախագիծ>> ինստիտուտի քաղաքաշինության արվեստանոցի խմբի ղեկավար Ջուլիետա Մուրադյանը, համահեղինակներ Մարտին Ջորոյանը, Ստեփանավանի գլխավոր ճարտարապետ Համլետ Բաղդասարյանը:

1.2. Համայնքի ժողովրդագրությունը

Ըստ 2012թ. տվյալների՝ քաղաքի բնակչությունը կազմում է 16735 մարդ, որից 8972-ը՝ իգական, իսկ 7763-ը արական սեռի ներկայացուցիչներ են: Համայնքի բնակչությունը հիմնականում միատարր է, սակայն կան նաև այլազգիներ՝

հույներ-197

ռուսներ-120

եզդիներ-58

այլք-36



Բնակչության տարիքային կազմը՝ ըստ 2012թ.

0-4 տարեկան	1009
5-14 տարեկան	1893
15 տարեկան	166
16-17 տարեկան	673
18 տարեկան	449
16-62 տարեկան	12000
63 և ավելի	600

Բնակչության սոցիալական կազմը՝ ըստ 2012թ. դեկտեմբեր ամսվա

Թոշակառուներ	5600
Փախստականներ	8 /Ադրբեջանից Ստեփանավան են ներգաղթել 1010 փախստական, երկրաշարժից հետո մնացել են 400-ը, ներկայումս նրանցից 392-ն ստացել են ՀՀ քաղաքացիություն, 8-ը ունեն փախստականի վկայական/
Միակողմանի ծնողագուրկ երեխաներ	212
Երկկողմանի ծնողագուրկ երեխաներ	2
Հայրենական պատերազմի մասնակիցներ	16



Աշխատանք ունեցողներ	3415
Գործազուրկներ	2165
Ընտանիքների՝ ծխերի թիվը	5217
<<Փարոս>> ընտանեկան նպաստների համակարգում գրանցված ընտանիքներ	3225
Զոհվածների ընտանիքներ	20
Ժամանակավոր կացարաններում բնակվող ընտանիքներ	374 ընտանիք բնակվում են տարբեր տեսակի Ժամանակավոր կացարաններում, ևս 296 ընտանիք երկրաշարժից հետո կազմավորված <<Աշոտաբերդ>> թաղամասի փայտաշեն տնակներում
Այլ	

1.3. Տեղական ինքնակառավարման մարմինները

1996թ.-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքը, որով ՀՀ ամբողջ տարածքում, այդ թվում նաև Ստեփանավան քաղաքային համայնքում ներդրվեց տեղական ինքնակառավարման համակարգը: Ժողովրդի իշխանությունն իրականացնելու և համայնքային խնդիրները լուծելու նպատակով 1997թ.-ին առաջին անգամ ընտրվեցին տեղական ինքնակառավարման մարմիններ՝ համայնքի ավագանի և համայնքի ղեկավար, որն իր աշխատակազմի հետ միասին իրականացում է տեղական ինքնակառավարում: 1997-2012թ.-ը Ստեփանավանը ընտրել է 3 քաղաքապետ. 1997-2002թ.թ. Ստեփանավանում 6 տարի քաղաքապետ է եղել Ռոման Սերգեյի Բաղդասարյանը, 2002-2012թ.թ 3 անգամ անընդմեջ



ղեկավար, որն իր աշխատակազմի հետ միասին իրականացում է տեղական ինքնակառավարում: 1997-2012թ.-ը Ստեփանավանը ընտրել է 3 քաղաքապետ. 1997-2002թ.թ. Ստեփանավանում 6 տարի քաղաքապետ է եղել Ռոման Սերգեյի Բաղրամյանը, 2002-2012թ.թ 3 անգամ անընդմեջ քաղաքապետ է ընտրվել Սարգիս Մինասի Ղարաքեշիշյանը, իսկ 2012թ. սեպտեմբերի 9-ին համայնքի ղեկավար ընտրվեց Միքայել Միանսի Ղարաքեշիշյանը:

Ստեփանավան համայնքի ներկայիս ավագանին՝ 11 անդամներով, ընտրվել է 2009թ.-ին: Ավագանու անդամներն են՝

1. Աբրահամյան Վանիկ
2. Ալեքսանյան Արտակ
3. Բարոյան Արսեն
4. Գրիգորյան Արմեն Գ.
5. Գրիգորյան Արմեն Փ.
6. Հովսեփյան Արթուր
7. Մաղաքյան Նարեկ
8. Մարգարյան Սերգեյ
9. Մելիքսեթյան Արմեն
10. Միրզոյան Արտակ
11. Պապյան Ռազմիկ

Համայնքի ղեկավարը քաղաքապետարանի աշխատակազմի և քաղաքապետարանի ենթակայությամբ գործող բյուջետային հիմնարկների հետ միասին իրականացնում է տեղական ինքնակառավարում:


Ստեփանավան համայնքի քաղաքապետարանի աշխատակազմը բաղկացած է 6 բաժիններից, աշխատակազմի մասնագետներից և տեխնիկական սպասարկման անձնակազմից: Քաղաքապետարանում աշխատում է 56 մարդ, որից 29-ը՝ համայնքային ծառայողներ են, մյուսները՝ պայմանագրային աշխատողներ:

Քաղաքապետարանի ենթակայությամբ գործում են 9 հիմնարկ ձեռնարկություններ, որտեղ աշխատում է 141 մարդ:

Համայնքի զարգացմանը համընթաց՝ քաղաքապետարանում և բյուջետային հիմնարկներում առաջիկա տարիներին նախատեսվում է աշխատողների աճ՝ կապված



քաղաքային տնտեսության ծավալների մեծացման, ՆՈՒՀ-երում երեխաների թվաքանակի և խմբերի ավելացման, տուրիզմի զարգացման, համայնքի մարզական, մշակութային կյանքի աշխուժացման և այլնի հետ: Նախատեսվում է նաև քաղաքապետարանի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատողների աշխատավարձերի աճ՝ տարեկան միջին հաշվով 15 %-ի չափով: Համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքը ներկայացված է հավելված 1-ում:



ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

	Անուն, հայրանուն, ազգանուն	Կրթությունը, մասնագիտությունը
Քաղաքապետ	Միքայել Մինասի Ղարաքեշիշյան	բարձրագույն ինժեներ-տեխնոլոգ
Քաղաքապետի տեղակալ		
Աշխատակազմի քարտուղար	Մելանյա Յոլակի Ղազարյան	բարձրագույն լրագրող
Քաղաքապետի խորհրդական	Ռոստոմ Ալբերտի Քոչարյան	բարձրագույն ինժեներ-մեխանիկ
Քաղաքապետի խորհրդական	Թամարա Զումշուտի Ղարիբյան	բարձրագույն տնտեսագետ
Ֆինանսական բաժնի պետ		
Քաղաքաշինության, հողօգտագործման, արտակարգ իրավիճակների, առևտրի և տրանսպորտի բաժնի պետ	Հրահատ Մանթաշի Աբրահամյան	բարձրագույն ինժեներ
Կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և հասարակության հետ կապերի բաժնի պետ		
Եկամուտների հաշվառման, հավաքագրման, տուրքերի ու վճարների գանձման բաժնի պետ	Սուսաննա Անդրանիկի Հովսեփյան	բարձրագույն տնտեսագետ
Աուդիտորական բաժնի պետ	Սերգեյ Մարտի Գասպարյան	բարձրագույն ինժեներ-տնտեսագետ
ՔԿԱԳ տարածքային ստորաբաժանման պետ	Օֆելյա Հայրիկի Վահանյան	բարձրագույն իրավաբան
ՀԾ գլխավոր մասնագետ, գլխավոր ճարտարապետ	Համլետ Հրանտի Բաղդասարյան	բարձրագույն ճարտարապետ
ՀԾ գլխավոր մասնագետ, իրավաբան	Համլետ Խաչիկի Մխիթարյան	բարձրագույն իրավաբան
ՀԾ գլխավոր մասնագետ	Էյա Անուշավանի Սիմոնյան	բարձրագույն մանկավարժ



1. 4. Համայնքի ձեռնարկությունները

Մինչև 1988թ.-ի երկրաշարժը Ստեփանավանն ունեցել է 11 արտադրական ձեռնարկություն՝ գործվածքային, կարի արտադրական, կահույքի, թռչնաբուծական ֆաբրիկաներ, Արդկապ, ԲՀԷՍ, փորձացուցադրական պանրի արտադրության գործարաններ, ավտոտրանսպորտային ձեռնարկություն, կենցաղսպասարկման կոմբինատ, զոնալ փորձարարական կայան, տպարան: Նշված ձեռնարկությունները աղետից հետո՝ մինչև Խորհրդային միության փլուզումը, աշխատեցին մասամբ: 1990 թվականից քաղաքում որպես գործող ձեռնարկություն մնաց «ԲՀԷՍ պլավմա» գործարանը, մասամբ էլ՝ պանրի և «Արդկապ» գործարանները:

Աճող գործազրկությունը, նոր արտադրական հարաբերությունները հիմք դարձան Ստեփանավանում մանր ու միջին բիզնեսի, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների, անհատ ձեռներցության զարգացման համար: Վերջին չորս տարվա վերլուծությունը հետևյալ պատկերն է ներկայացնում.

Հ/Հ	Անվանացանկ	2009	2010	2011	2012	Կազմակերպություններ ի անվանումը
1	Գործարաններ	0	0	0	0	-
2	Ֆաբրիկաներ	0	0	0	1	հանքարդյունաբերակա ն «Սագամար» ՓԲԸ
3	Սահմանափակ պատասխանատու ընկերություններ	65	35	35	65	Լիմոնադի, քարի, փայտի մշակման, կահույքի, հացամթերքների արտադրություն, գյուղատնտ., առևտրի և այլն
5	ՓԲ, ԲԲ, ՊՓԲ ընկերություններ	12	12	22	23	ԲՀԷՍ, Արդկապ /սարքաշինական/, պանրի-նախկին գործարանների բազայի վրա գործող ընկերություններ, հիվանդանոց, պոլիկլինիկա,



						ատամնաբուժարան և այլն
6	Բանկեր, ֆին. կազմակերպությունն եր Համայնքի տարածքում գործող վարկավորող և աջակցող կազմակերպությունն եր	4	8	7	9	Արդշինինվեստբանկ, ՎՏԲ բանկ, Գանձապետարան, Ագրիկոլ բանկ, Հայգյուղփոխբանկ, Ֆինքա, Սեվ, Արեգակ, ԷԿԼՕՖ
7	Սպասարկող Կազմակերպություն ներ	7	7	7	7	Հայջրնուղկոյուղի, Հայրուսգազարդ, Էլ. ցանցեր, Բիլայն, Հայփոստ, Կոմունալ ՎիվաՍեյ ՄՏՍ, Օրանժ Արմենիա
8	Անհատ ձեռներեցներ	191	194	200	221	Առևտրի, սպասարկման կետեր, հասարակական սնունդ
9	Ֆերմերային տնտեսություններ	8	8	8	6	Արմվյան Ալբերտ 50 Մելիքսեթյան Վիլիկ 10 Հունանյան Սամվել 100 Մովսիսյան Անուշավան 10 Մովսիսյան Հովիկ 90 Հովսեփյան Վարդան 100
10	Կենցաղային սպասարկում	19	18	27	27	Վարսավիրանցներ, հագուստի, կոշիկի նորոգման կետեր, էլեկտրասարքավորումն երի նորոգում
11	Հյուրանոցներ	4	4	4	5	«Անահիտ» և «Վահագն» պանսիոնատներ, Մոթել Լոռի, «Լոռի» հյուրանոց «Մոմ» հյուրանոց



12	Հասարակական կազմակերպություններ	8	9	15	10	«Վերածնունդ» ԲՀ «Վորլդ Վիժն» «Օրիոս» քնապահպանական հկ «Լիարժեք կյանք» հկ «Հույս, հավատ, սեր» հկ «Տեղական կենտրոն» ՀԿ «Զարգացող համայնքներ» ՀԿ «Լոռե» փրկարարական ջոկատ հկ
	Շինարարական կազմակերպություններ	4	5	5	5	«Վարդան» ՍՊԸ «ՄՍ շինարարներ», «Տիտոն» ՍՊԸ «Լիմիերթ» ՍՊԸ «Սագամար» ՓԲԸ

Շինարարության բնագավառում զարգացման տենդենցը տանում է դեպի ֆիզիկական անձանց կողմից կառուցվող սպասարկման ոլորտի համար նախատեսված տարբեր օբյեկտների կառուցմանը: Այս ասպարեզում քաղաքի առաջընթացը զգալի է, նախկին վազոն-տնակներում տեղադրված օբյեկտները հիմանականում փոխարինվել են քարե կառույցներով:

1.5 . Համայնքի ընդհանուր տնտեսական ցուցանիշները

Համայնքի տնտեսական օբյեկտները 167 են, որից 1-ը արդյունաբերական 1 գործարան է (ոսկու հանքարդյունաբերություն), 27-ը՝ կենցաղային սպասարկման օբյեկտներ: Համայնքում գործում են 10 արտադրական մանր ձեռնարկություններ, որոնց համախառն ընդհանուր արտադրանքը 2012թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 313.636.5 հազար դրամ: Համայնքում գործում են «ԲՀԷՍ Պլազմա» և «Բախշի Պլազմա» սահմանափակ պատասխանատու ընկերությունները, որոնք վերաձևավորվել են նախկին տրանսֆորմատորային, պլազմատրոնային, կապի սարքավորումներ արտադրող համամիութենական համարվող գործարանների բազայի վրա;

Ներկայումս «ԲՀԷՍ Պլազման» թողարկում է շինանյութ՝ գիպսակարտոն, որը տարվա ընթացքում կատարում է 9,3 մլն դրամի շրջանառություն, իսկ «Բախշի Պլազմա»-ն արտադրում



է էլեկտրական տրանսֆորմատորներ, շրջանառությունը կազմում է 49,7 մլն դրամ, ծախսում է 15360 կ/վտ էլեկտրաէներգիա:

Մանդարյունաբերության ոլորտում գործող « Ալայան» ՍՊԸ զբաղվում է կաթի փոշու արտադրությամբ, տարեկան շրջանառությունը կազմում է 37,1 մլն դրամ, ծախսում է 177600 կ/վտ էլեկտրաէներգիա և 110000մ³ գազ, իսկ հացամթերքներ արտադրող « Վանիկ Չերքեզյան» և «Ստեփ անուշ» ձեռնարկությունները արտադրում են համապատասխանաբար 11,8, 5,9 մլն դրամի շրջանառությամբ արտադրատեսակներ , Վ. Չերքեզյանը ծախսում է 21160կ/վտ էլեկտրաէներգիա և 19300մ³ գազ:

Գործում է «Քարախաչ» ՍՊԸ ձեռնարկությունը, որն զբաղվում է մսամթերքի, կաթնամթերքի արտադրությամբ: Ընկերությունն ունի 155 գլուղ խոշոր և 150 գլուխ մանր եղջերավոր անասուններ: Տարեկան ծախսում է 840.000 դրամի էլեկտրաէներգիա և 120.000 դրամի խմելու ջուր:

Համայնքում գործող պարենային և ոչ պարենային ապրանքներ արտադրող տաս և ավելի աշխատողներ ունեցող կազմակերպությունների ցանկ

N	Կազմակերպության անվանումը	Կազմակերպության գործունեության տեսակը	Կազմակերպության հասցեն
1	«ԲՀԷՍ Պլազմա» ՍՊԸ	Շինանյութ	Բաղրամյան 124
2	«ԲախշիՊլազմա» ՍՊԸ	Էլեկտրական սարքեր	Վիրահայոց մայրուղի
3	Ա/Չ Վանիկ Չերքեզյան	Հացամթերք	4-րդ մ/շ 3/15
4	Ստեփ Անուշ ՍՊԸ	Հացամթերք	Կամո 62
5	«Ալայան»ՍՊԸ	Կաթնամթերք կաթի փոշի	Արևելյան 6
6	«Քարախաչ»ՍՊԸ	մսամթերք կաթնամթերք	Շագարդա

1. 6. Բնակելի և ոչ բնակելի տարածքների սպասարկում



- Համայնքի բազմաբնակարան շենքերի թիվը՝ 146, բնակարանների թիվը՝ 1666
- Բնակֆոնդի ընդհանուր մակերեսը՝ 117 հազ. 259քմ, բնակելի մակերեսը՝ 68 հազ. 865քմ, այդ թվում 20 հազ. 832քմ-ը՝ համայնքային սեփականություն, իսկ 96 հազ. 427քմ-ը՝ մասնավոր (սեփականաշնորհված)
- Բազմաբնակարան վթարային բնակելի շենքերի թիվը՝ 14, բնակարանների թիվը՝ 307
- Կիսակառույց բազմաբնակարան բնակելի շենքերի թիվը՝ 14
- Առանձնատների թիվը՝ 3561
- Վթարային առանձնատների թիվը՝ 356
- Կիսակառույց առանձնատների թիվը՝ 214
- Բնակարանի կարիքավորների թիվը՝ 374 ընտանիք
- Ավտոտնակների թիվը՝ 374

1. 7. Հողօգտագործում

* Համայնքի վարչական տարածքը՝ 5307.9 հա, այդ թվում՝

.բնակարանային ֆոնդ՝ 269.07հա

.արտադրական նշանակության հողեր՝ 34.18 հա 196.33 հա

. գյուղտնտեսական նշանակության հողեր՝ 3445.14 հա

. գերատեսչական հիմնարկների զբաղեցրած հողեր՝ 48.24 հա/12հա???

. հանգստի գոտիներ՝ 19.08հա, որից 5.85հա՝ առողջարարական նշանակության

.պատմամշակութային նշանակության հողեր՝ 121.30 հա

. ջրային ֆոնդեր՝ 444.64 հա

. անտառային ֆոնդեր՝ 309.44 հա, որից 247.94 հա՝ անտառ, 61.50 հա՝ թփուտ

- Բնակավայրի տարածք՝ 629.71հա
- Հողի սեփականաշնորհմանը մասնակցած ընտանիքների թիվը՝ 320
- Մեկ հողաբաժնի չափը՝ 1.2 հա
- Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական պահուստային հողերը՝ 126.9 հա



- Համայնքի սեփականություն համարվող հողերը՝ 5307.9 հա
- Օտարված և օգտագործման տրամադրված հողերը՝

2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.
41.6873հա	9.215հա	0.2989հա	2.0775հա

1. 8. Գյուղատնտեսություն

Համայնքի բնակչության շուրջ 15%-ը զբաղվում է գյուղատնտեսությամբ՝ անասնապահություն, դաշտավարություն, այգեգործություն, մեղվաբուծություն:

Խոշոր և մանր եղջերավոր անասունների քանակը 3670 է, որից 43-՝ ձի, 2923-ը՝ խոշոր եղջերավոր, 701-ը՝ մանր եղջերավոր կենդանիներ են: Մեղվաբուծությամբ զբաղվում է 124 տնտեսություն:

Համայնքում արտադրվում են գյուղատնտեսական նշանակության հետևյալ մթերքները՝ կարտոֆիլ, հացահատիկ, բանջարեղեն (կաղամբ, կանաչեղեն, վարունգ, լոլիկ, լոբի...), կաթնամթերք:

Համայնքում չկան ոռոգելի գյուղատնտեսական նշանակության հողատարածքներ: Դաշտամիջյան ճանապարհների վիճակը գնահատվում է բավարար:

1. 9 . Բնության և շրջակա բնական միջավայրի պահպանություն

- **Համայնքի հողերի վիճակը** գնահատվում է բավարար. աղակալում, հողմնահարում, ողողում և նմանատիպ երևույթներ չկան: Դեպի Ձորագետի կիրճ իջնող ճանապարհին՝ Գալոյի բոստան կոչվող տարածքում, նկատվում է հողատարում (սողանք)՝ 2 հա չափով, իսկ Օրան-Լոռի կոչվող հանդամասում նկատելի է հողի ճահճացում՝ 30հա չափով:

- **Հողերի, ջրերի և շրջակա միջավայրի աղտոտում**

.կենցաղային թափոններ, աղբահանության կազմակերպում

Համայնքում կենցաղային աղբի և սանիտարական մաքրման աշխատանքներն իրականացվում են կենտրոնացված ձևով՝ համապատասխան գրաֆիկի և սխեմաների



միջոցով: Աշխատանքներն իրականացվում է <<Կոմունալ տնտեսություն>> ԲԲԸ-ի միջոցով: Կենցաղային թափոններն ու աղբը տեղափոխվում են քաղաքային աղբավայր:

Արդյունաբերական թափոններ

Համայնքի տարածքում գործող հիմնարկ-ձեռնարկությունների արդյունաբերական թափոնները (ոչ վտանգավոր) աղբավայր են տեղափոխվում տվյալ կազմակերպության սեփական կամ կատարող օպերատորի միջոցներով:

Արդյունաբերական վնասակար արտանետումներ

Արդյունաբերական վնասակար արտանետումների տեսանկյունից համայնքի համար լուրջ խնդիր է ներկայացնում <<Սագամար>> ոսկու հանքարդյունաբերական կոմբինատը: Ընկերությունը հավաստիացնում է, որ օդի և բնության աղտոտում տարածաշրջանին չի սպառնում, քանի որ հանքարդյունաբերության ոլորտում առաջին անգամ կիրառվում է չոր պոչերի տեխնոլոգիան, ըստ որի հանքում օգտագործված ջուրը կրկին հետ է մղվում լեռնահարստացուցիչ ֆաբրիկա, իսկ արտադրական և կենցաղային արտանետումները զտվում են գերմանական և կանադական արտադրության հատուկ մաքրման կայանների միջոցով: Այնուամենայնիվ խնդիրը մշտապես գտնվում է տեղական իշխանության և բնապահպանական կազմակերպությունների ուշադրության կենտրոնում:

- **Մեկ շնչի հաշվով կոշտ թափոնների քանակը** համայնքում կազմում է 6 կգ:
- **Խմելու ջրի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վիճակը** բավարար է, ներհամայնքային ոռոգման համակարգ համայնքը չունի: : Համայնքի հյուսիսային մասով անցնում է «Լոռվա ջրանցք» ոռոգման ջրագիծը, որը համայնքի տարածքում ունի 3 կմ երկարություն: Ջրի կորուստների տոկոսային արտահայտությունը՝ 24% է: Քաղաքում առկա է խմելու ջրի ներհամայնքային համակարգ: Համայնքի ջրամատակարարումն իրականացվում է 3 աղբյուրներից. Նովոսելցովո՝ ինքնահոս եղանակով՝ մինչև 30լ/վ, պոմպերով՝ մինչև 80լ/վ և Գյուլիդարա ինքնահոս՝ մինչև 5լ/վ քանակով: Քաղաքի տարածքում տեղակայված են օրվա կարգավորիչ 3 ջրամբարներ՝ 2x1000 մ³, 2x400մ³ և 2x300մ³ չափերով: Համայնքի ջրաբախշից ցանցի երկարությունը կազմում է 63կմ, որից 12կմ-ը անցած 4 տարիների ընթացքում հիմնանորոգվել է: Քաղաքի ջրամատակարարումն իրականացվում է համաձայն գործող գրաֆիկի: Վերջին տարիներին համայնքում զգալի



աշխատանքներ են կատարվել ջրամատակարարման բարելավման, խմելու ջրի մատակարարումը շուրջօրյա դարձնելու ուղղությամբ, որի արդյունքում քաղաքի մի մասը ներկայումս ապահովված է շուրջօրյա ջրամատակարարմամբ: Առաջիկա տարիներին նախատեսվում է շարունակել ջրամատակարարման բարելավմանն ուղղված ծրագրերը՝ ապահովելով ամբողջ համայնք շուրջօրյա խմելու ջրով:

- **Ջրային ավազանների վիճակը**- Համայնքի տարածքով անցնում է Ձորագետը՝ Չքնաղ վտակով, որը համայնքի տարածքում ունի 3.8 կմ երկարություն: Ձորագետը քաղաքը բաժանում է աջ ու ձախ ափերի, որոնք միմյանց միանում են Ձորագետի կիրճի՝ 220մ երկարությամբ կամրջով, որն ունի ռազմավարական նշանակություն: Համայնքի ջրային ավազանն աղտոտված է, կա մաքրման անհրաժեշտություն: Համայնքի ջրային ավազանների համար բնապահպանական տեսանկյունից վտանգ են ներակայացնում Ձորագետի վրա կառուցվելիք փոքր հէկ-երը:
- Սուր վարակիչ հիվանդություններ՝ կապված շրջակա միջավայրի հետ, չկան:
- **Համայնքի կանաչապատ տարածքները** կազմում են 14 հա: Կանաչ տարածքների պահպանությունը և խնամքը իրականացվում է համայնքի ուժերով՝ սեզոնային բրիգադայի աշխատողների միջոցով: Համայնքի և բնապահպանական հասարակական կազմակերպությունների կողմից հաճախ կազմակերպվում են ծառատունկեր:

• Անտառ

Ստեփանավանի տարածաշրջանի անտառապետության անտառածածկ տարածքն 6665 հա և ունի ռեկրեացիոն մեծ նշանակություն: Անտառի հիմնական ծառատեսակներն են վրացական կաղնին, արևելյան կաղնին: Կաղնուն ուղեկցում են թխկին, բոխին, լորենին: Անտառի կենսաբազմազանությունը բաղկացած է հիմնականում թռչուններից՝ անտառակտցար, մկնորս բազեն, լալկան բազեն, կանեփաքաղը, վարսաքաղը, սալամկաքավը, կաթնասուններից՝ արջը, աղվեսը, կզաքիսը, նապաստակը: Ստեփանավանի աջափնյա սարալանջերը հարավ-արևմտյան կողմից անտառապատ են: Համայնքի անտառամերձ գոտում գերակշռող մաս են կազմում սոճու տեղական և դրիժմյան ծառատեսակները, որոնց կողմից արտադրվող ֆիտոցիդներն ունեն առողջապահական մեծ



նշանակություն և օգտակար են թոքերի և շնչառական հիվանություններով հիվանդ մարդկանց ապաքինման համար:

1. 10. Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն

* Ներհամայնքային փողոցների ու ճանապարհների երկարությունը 68.3կմ է, մակերեսը՝ 820հազ քմ: Ներհամայնքային ճանապարհների 65.1կմ հիմնականում երթևեկելի է, բարեկարգված, իսկ 3.2 կմ դեռևս բնահողային վիճակում է:

- Համայնքային ենթակայության կամուրջները 8-ն են, որոնք հիմնականում գտնվում են նորմալ վիճակում: Կամուրջներից ամենամեծն ունի 220մ երկարություն և իրար է կապում Ձորագետի կիրճով աջ ու ձախ ափերի բաժանված քաղաքը: Կամուրջն ունի նաև ռազմավարական նշանակություն: Ռազմավարական մեծ նշանակություն ունի նաև Ձորագետի կիրճի փոքր կամուրջը, որը սակայն անսմիթաբար վիճակում է, վտանգավոր է երթևեկության համար և ունի հիմնանորոգման հրատապ անհրաժեշտություն:

- Համայնքի տրանսպորտային միջոցները.

Ստեփանավանում չկան համայնքային ենթակայության տրանսպորտային հիմնարկներ ու կազմակերպություններ, չի աշխատում ներքաղաքային հասարակական տրանսպորտ: Ներկա պահին ֆիզիկական անձի կողմից գործում է ընդամենը մեկ երթուղային տաքսի ծառայություն, որը փորձում է սպասարկել համայնքի բնակչությանը՝ որպես ներքաղաքային հասարակական տրանսպորտ: Սակայն մեկ երթուղայինը, սպասարկելով ամբողջ քաղաքի տարածքը, ժամանակի առումով հաճախ խնդիրներ է ունենում:

Վերջին տարիներին համայնքում տարերայնորեն գործում են մարդատար տաքսի ծառայությունները՝ ֆիզիկական անձանց կողմից, որոնք ակտիվորեն սպասարկում են համայնքի բնակչությանը:



- Համայնքում առկա են հետևյալ տարնապորտային միջոցները՝

Մարդատար			
Թեթև մարդատար	Միկրոավտոբուս	Ավտոբուս 20-35 ուղևորատար	Ավտոբուս 35 և ավելի ուղևորատար
3334	23	15	1

Բեռնատար					
ԿԱՄԱԶ	ԿՌԱԶ	ԶԻԼ	ՄԱԶ	ԳԱԶ	Այլ բեռնատար
15	12	8	4	15	6

- Համայնքի տարածքում ճանապարհային երթևեկության նշանների տեղակայման վիճակը ընդհանուր առմամբ համարվում է բավարար: Սակայն անհրաժեշտ է, որպեսզի դպրոցների մոտ տեղակայվեն երթևեկության համապատասխան նշաններ, տեղադրվեն լուսակիրներ, գծանշվեն փողոցների անցումները և այլն:

1. 11. Առևտուր և սպասարկում

Համայնքի տարածքում առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի օբյեկտների թիվը՝ 163, այդ թվում՝

առևտրի փոքր , միջին և խոշոր օբյեկտներ-130

տոնավաճառներ-0

բենզինի լցակայաններ-6

գազի լիցքավորման կետեր-2

հանրային սննդի օբյեկտներ-6

խաղատներ, զվարճանքի, շահումներով խաղերի օբյեկտներ-1

բաղնիքներ/սաունաներ-0

այլ կենցաղային ծառայություններ-18



Համայնքում զարգացած է մանր և միջին բիզնեսը, բնակչության զգալի մասը զբաղվում է առևտրով և փոքր ծավալի արտադրական բիզնեսով՝ հիմնականում հացաբուլկեղենի և կաթնամթերքի արտադրությամբ:

1.12. Կրթություն

- Ստեփանավանում գործում է 7 հանրակրթական դպրոց, որոնցից մեկը՝ ավագ և մեկը՝ վարժարան, որտեղ ընդհանուր հաշվով սովորում են 1825 դպրոցական: Հանրակրթական դպրոցները, բացի վարժարանից, քարաշեն են: Շենքերի վիճակը ընդհանուր առմամբ գնահատվում է բավարար: Սակայն, բացի թիվ 6 դպրոցից, որն ունի շենքային և գույքային լավագույն պայմաններ և համապատասխանում է ժամանակակից դպրոցի չափանիշներին, մյուս բոլոր դպրոցներում առկա են տարբեր խնդիրներ՝ կապված շենքային պայմանների բարելավման (կոսմետիկ վերանորոգում, ջրագծերի, կոյուղագծերի փոխում, ջեռուցման համակարգի ձևափոխում, խոհանոցի հիմնանորոգում, դասասենյակների լուսամուտների հիմնավերանորոգում, մարագահրապարակների ձևավորում...) և նոր գույքի ձեռքբերման հետ (աշակերտական սեղան-աթոռների փոխում, համակարգչային դասարանների և գրադարանի վերակառուցում՝ համաձայն նոր պահանջների, լաբորատորիաների կահավորում...): Քաղաքի թիվ 1 դպրոցն ունի նաև մարզադահլիճի և հանդիսությունների դահլիճի կառուցման և կահավորման անհրաժեշտություն: Թիվ 1 վարժարանը գործում է հարմարեցված տնակային պայմաններում:
- Ստեփանավանում գործում է 4 նախադպրոցական ուսումնական հաստատություն (այսուհետ՝ ՆՈՒՀ)՝ 12 տարբեր տարիքային խմբերով: Նախադպրոցական համակարգում աշխատում է 62 մարդ: Համայնքի 0-6 տարեկան 1124 երեխաներից ՆՈՒՀ-երում ընդգրկված են 385-ը (34%)-ը: 739 երեխա դուրս են ՆՈՒՀ-երի ցանցից: Թիվ 1 և թիվ 4 ՆՈՒՀ-երի շենքային պայմանները բավարար են, թիվ 3 ՆՈՒՀ-ը, որն իրականացնում է նաև ներառական ծրագիր, գործում է ժամանակավոր հարմարեցված շենքում, իսկ թիվ 2 ՆՈՒՀ-ը թեև շենքային պայմաններում է գործում, սակայն գտնվում է ծայրահեղ անմխիթար վիճակում և ունի հիմնանորոգման խիստ անհրաժեշտություն: Բոլոր ՆՈՒՀ-երում առկա է տանիքի, կոյուղու, ջրագծերի,



սանհանգույցի և սենյակաների վերանորոգման, բակերի և պարիսպների բարեկարգման, մանկական խաղահրապարակների համալրման և նորոգման խնդիր: Թիվ 1, 2, 3, 4 ՆՈՒՀ-երում խիստ զգացվում է կոշտ և փափուկ գույքի պակաս (սեղան-աթոռներ, անկողնային պարագաներ, խաղամիջոցներ, դիդակտիկ նյութեր, խոհանոցային սպասք, բուժկետների մասնագիտական պարագաներ...): Համայնքային ՆՈՒՀ-երը չունեն անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում: Համայնքի ՆՈՒՀ-երում խմբերի խտությունը գերազանցում է սահմանված նորմերը:

- Համայնքում գործում է նաև Ալեքսանդր Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջը, որն իրականացնում է միջին մասնագիտական կրթություն հետևյալ բաժիններում <<Ապրանքագիտություն>>, <<Մենեջմենթ>>, <<Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում>>, <<Անասնաբուժություն>>: Քոլեջն իրականացնում է առկա և հեռակա ուսուցում: Ներկայումս այն ունի 37 աշխատող և 193 ուսանող(134-ը՝ առկա, 59ը՝ հեռակա)՝ ոչ միայն Ստեփանավանից, այլև տարածաշրջանի գյուղերից: Քոլեջն ունի բավարար շենքային պայմաններ, սակայն երկրաշարժից հետո քոլեջի նախկին վարչական շենքը և ավտոտնակները գտնվում են վթարային վիճակում և վտանգ են ներկայացնում ուսանողության համար, ուստի անհրաժեշտ է դրանք քանդել: Առկա է հանդիսությունների դահլիճի վերանորոգման և մարզադահլիճի կառուցման խնդիր: Գույքային պայմանները հիմնականում բավարար են, քոլեջն իր ունեցած հնարավորությունների հաշվին պարբերաբար հագեցնում է նյութատեխնիկական բազան, սակայն անհրաժեշտություն կա համակարգչային լսարանը համալրել նոր համակարգիչներով և ժամանակակից տեխնիկական միջոցներով, ձեռք բերել լաբորատոր սարքավորումներ՝ հատկապես անասնաբույժ որակավորմամբ մասնագետների պատրաստման համար: Քոլեջն ապահովված չէ նաև մշտական ջրահոսքով և սեփական տրանսպորտային միջոցով: Վերջինիս առկայության դեպքում հնարավոր կլինի առավոտյան ուսանողներին կազմակերպված ձևով տեղափոխել քոլեջ, /քանի որ այն բավականին կտրված է քաղաքի կենտրոնից/



ինչպես նաև՝ ուսումնական և արտադրական պրակտիկայի վայրեր: Քոլեջը համագործակցում է ՀՀ պետական ագրարային համալսարանի հետ:

- Ստեփանավանում գործում է նաև 1 բուհ՝ Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի Ստեփանավանի մասնաճյուղը և նրան կից քոլեջը, որտեղ պատրաստվում են մասնագետներ արտակարգ իրավահիմակները կառավարելու, կանխարգելու ուղղությամբ: Ակադեմիայի քոլեջն ունի 100 ուսանող, իսկ Ակադեմիան, որն առայժմ իրականացնում է հեռակա ուսուցում ունի 250 ուսանող՝ ոչ միայն Ստեփանավանից այլև Լոռու և ՀՀ մյուս մարզերի համայնքներից: Ակադեմիան ունի 3 բաժին՝ <<Պաշտպանություն արտակարգ իրավահիմակներում>>, <<Հրդեհային պաշտպանություն>> և <<Փրակարական գործ>>: Իսկ Ակադեմիային կից քոլեջն ունի նաև <<Մենեջմենթ>> բաժին:

Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի Ստեփանավանի մասնաճյուղում աշխատում է 30 մարդ, դասախոսներից մի քանիսը Երևանից են: Ակադեմիայի շենքային պայմանները բավարար են, սակայն կապված ուսանողների աճի հետ անհրաժեշտություն կա նոր մասնաշենք կառուցելու:

1.13. Մշակույթ, սպորտ, երիտասարդության հետ տարվող աշխատանքներ

- Ստեփանավանում կա 1 **երաժշտական դպրոց**, որն ունի 5 բաժին՝ լարային, դաշնամուրային, փողային, վոկալ և ժողովրդական նվագարանների: 2013 թվականի հունվարի դրությամբ երաժշտական դպրոց են հաճախում 163 երեխա և աշխատում 24 մարդ: Շենքը նորակառույց է, սակայն ունի ջեռուցման խնդիր՝ նորմալ չի տաքանում: Նոր մանրահատակն էլ ունի սնկային հիվանդություն և ժամանակից շուտ փտում է: Կա մասնագիտական գույքի և տեխնիկական սարքավորումների անհրաժեշտություն: Երաժշտական դպրոցը չունի անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում:
- Ստեփանավանում կա **արվեստի 1 դպրոց**, որն ունի 6 բաժին՝ լարային, դաշնամուրային, փողային, վոկալ, ժողովրդական նվագարանների և կերպարվեստի: 2013 թվականի հունվարի դրությամբ արվեստի դպրոց են հաճախում 118 երեխա և աշխատում 16 մարդ: Երկրաշարժից հետո արվեստի դպրոցը տեղակայվել է 1988թ.-



ին կառուցված ժամանակավոր փայտաշեն հարմարեցված կառույցում, որը ներկայումս գտնվում է անմխիթար, մաշված վիճակում: Մաշված են նաև արվեստի դպրոցի երաժշտական նվագարարները, կա մասնագիտական և տեխնիկական գույքի անհրաժեշտություն: Արվեստի դպրոցը ևս չունի անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում:

- Ստեփանավան ունի համայնքային ենթակայությամբ գործող 1 **մարզադպրոց**, որտեղ իրականացվում են մարզումներ հետևյալ մարզաձևերի ուղղությամբ՝ հունահռոմեական ըմբշամարտ, դասական ըմբշամարտ, ֆուտբոլ, ծանրամարտ, շախմատ: 2013թ.-ի հունվարի 1-ի դրությամբ մարզադպրոցում մարզվում են 171 երեխա և պատանի, աշխատում 16 մարդ: Մարզադպրոցի շենքը նորակառույց է, սակայն շինարարական ինչ-ինչ խնդիրների և փորձնական քննությունը չանցնելու պատճառով չի շահագործվում դպրոցի ջեռուցման համակարգը: Խնդիրներ կան նաև կապված ջրի ժամանակավոր գրաֆիկի հետ, որի հետևանքով լոգախցիկների կիրառությունը դառնում է անհնար: Մարզադպրոցն ունի նաև նոր մասնագիտական մարզագույքի պահանջ: Ընթացքի մեջ հին մարզադպրոցի մասնաշենքի հենքի վրա իրականացվող ըմբշամարտի համար նախատեսված մարզադահլիճի շինարարությունը: Ինչպես համայնքի մյուս արտադպրոցական կրթություն իրականացնող հիմնարկները, այնպես էլ մարզադպրոցը չունի անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում:
- Համայնքում կա 1 **գրադարան**՝ Ստեփանավանի Կենտրոնական գրադարանը, որտեղ աշխատում է 10 մարդ, ունի 2703 ընթերցող: Գրքային ֆոնդը կազմում է 144 հազ. 879 գիրք: Գրադարանը տեղակայված է 1988թ.-ին կառուցված հավաքովի կոնստրուկցիոն ժամանակավոր շինությունում, որն ունի հիմնանորոգման կարիք (տանիք, սանհանգույց, ջրագիծ, կոյուղագիծ, պատեր...): Գրադարանն ունի նոր և մասնագիտական գրքերի, գրադարակների, սեղան-աթոռների՝ հատկապես ընթերցասրահի համար նախատեսված, տեխնիկական միջոցների անհրաժեշտություն: Գրադարանը նույնպես չունի անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում:



- Ստեփանավանն ունի 1 **մշակույթի տուն**՝ Ստեփանավանի Անդրանիկ Մարգարյանի անվան մշակույթի պալատը, որտեղ ներկայումս աշխատում է 20 մարդ: Մշակույթի պալատն ունի մանկապատանեկան ստեղծագործական տարբեր խմբեր: Ներկայումս գործում է 14 խումբ՝ գոբելենի, դիզայնի, կերպարվեստի, մանրանկարչության, փայտի փորագրության, կարպետագործության, վարսավիրության, պատանի բնասերներ, վոկալի, ժողովրդական նվագարանների, փողային նվագախումբ, տիկնիկային թատրոնի խումբ, մեծահասակների երգչախումբ և պարի խումբ, որոնց մի մասը գործում է վճարովի հիմունքներով, մյուսը մասը՝ անվճար՝ տարբեր ծրագրերի միջոցով: Մշակույթի պալատն ունի 240 սան, որից 40-ը՝ տարածաշրջանի գյուղական համայնքներից: Մշակույթի պալատի շենքը շահագործման է հանձնվել 2010թ.-ին, շենքային և գույքային պայմանները լավ վիճակում են: Կա ժողովրդական նվագարանների, տարագների և թատերական բնույթի այլ հանդերձների անհրաժեշտություն: Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում չունի նաև մշակույթի պալատը:
- Ստեփանավանում կա նաև **Մշակույթի և ժամանցի կենտրոն**, որը գործում ՀՀ մշակույթի նախարարություն ենթակայությամբ: Այստեղ աշխատում է 31 մարդ, ունի 2 բաժին՝ թանգարանային բաժին և ժամանցի բաժին: Ստեփանավանի մշակույթի և ժամանցի կենտրոնում է գտնվում նաև Ստեփան Շահումյանի տուն-թանգարանը, որտեղից էլ սկսվում է Ստեփանավան այցելած զբոսաշրջիկների ծանոթությունը քաղաքի հետ:

Մշակույթի և ժամանցի կենտրոնում գործում են ծղոտագործության (շուրջ 50 սան) և վոկալի խմբեր (15-20 սան):

Մշակույթի և ժամանցի կենտրոնը ունի հիմնանորոգման խիստ անհրաժեշտություն, անմխիթար վիճակում են համալիրի տանիքը, պատերը, Ստեփան Շահումյանի տունը, որը նաև պատմամշակութային կարևոր արժեք է ներկայացնում: Շենքը գազաֆիկացված չէ և չի ջեռուցվում:

- Ստեփանավանի մշակութային կյանքում լուրջ դերակատարում ունի նաև <<**Անի**>> **պարային ստուդիան**, որն ակտիվորեն մասնակցում է համաքաղաքային



միջոցառումներին, մարզային, հանրապետական և միջազգային փառատոնների: Ստուդիան ներկայումս ունի 150 սան, 2 աշխատող:

- Վերջին տարիներին համայնքը լուրջ ուշադրություն է դարձնում նաև **շախմատի** զարգացմանը: Բացի այն, որ ՀՀ կառավարության որոշման համաձայն հանրապետության հանրակրթական դպրոցների հետ միասին Ստեփանավանի հանրակրթական դպրոցներում ևս սկսեցին ուսուցանել շախմատ, Ստեփանավանում ստեղծվեց ՀՀ Շախմատի ֆեդերացիայի Ստեփանավանի մասնաճյուղ, որը ներկայումս ունի 35 սան, իսկ համայնքի մարզադպրոցում բացվեց շախմատի խումբ, որն ունի 22 սան:
- Համայնքում ներկայումս չկան գործող **երիտասարդական կազմակերպություններ**: Նախկինում ակտիվ գործունեություն էին ծավալում <<Ստեփանավանի երիտասարդական կենտրոն>> և <<Երիտասարդների աջակցության կենտրոն>> հկ-ները, որոնք ծրագրեր էին իրականացնում կապաված երիտասարդների հանգստի, ժամանցի կազմակերպման, մշակութային ակտիվության և այլնի հետ: Ներկայումս համայնքի երիտասարդական միջոցառումների կազմակերպմանն աջակցում է Հայաստանի Հանրապետական կուսակցության երիտասարդական թևը:

1.14. Առողջապահություն

Համայնքում գործում է 1 բժշկական կենտրոն՝ <<Ստեփանավանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն՝ 2 մասնաշենքով՝ պոլիկլինիկական և հիվանդանոցային:

Պոլիկլինիկական մասնաշենքում առկա են շենքային հետևյալ խնդիրները.

. տանիքի կապիտալ նորոգում

. ջրհորդանների տակ գտնվող պատերը քայքայված վիճակում են և ունեն նորոգման խիստ անհրաժեշտություն

. Պատերի կոսմետիկ նորոգում

. Ջրամատակարարման ցանցի բարեկարգում

. Հատակին փոխված լինող եռուփի փոխարինում նորով

Հիվանդանոցի մասնաշենքում առկա են հետևյալ շենքային խնդիրները՝

. Հատակի կապիտալ նորոգում



.Ներքին պատերի կոսմետիկ նորոգում և հրակայուն ներկով ներկում

.Հարկավոր է բոլոր պատուհանները դրսից ներկել

.Փոխել ընդունարանի, ինֆեկցիոն և ադմինիստրատիվ բաժանմունքների դռները:

.Բարելավել սանհանգույցների վիճակը, սանիտարահիգիենիկ պայմանները

<<Ստեփանավանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ում կա 184 Բուժաշխատող, որից՝ 47 բժիշկ: Առողջապահության ոլորտում լուրջ խնդիր կա՝ կապված բուժաշխատողների վերապատրաստման և համակարգը նոր, երիտասարդ կադրերով համալրելու հետ:

Բուժապասարկման նյութատեխնիկական բազան ևս նոր ժամանակակից բուժսարքավորումներով համալրման կարիք ունի:

Ստեփանավանում գործում է նաև ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ հակահամաճարակային տեսչության Լոռու մարզային կենտրոնի Ստեփանավանի ներմարզային կայանը, որը հետևում է քաղաքի սանիտարական վիճակին, վերահսկում վարակիչ, ինֆեկցիոն հիվանդությունները, փորձում կանխարգելել համաճարակների տարածումը քաղաքում և այլն: Հակահամաճարակային կենտրոնը գործում է քարե հին շենքում, որն ունի հիմնանորգման անհրաժեշտություն: Լաբորատորիաների և նյութատեխնիկական բազայի վիճակը բավարար է: Այստեղ աշխատում է 13 մարդ:

1.15. Հանգստի գոտիներ, զբոսայգիներ, խաղահրապարակներ, բակային տարածքներ

- Համայնքն ունի՝

- զբոսայգի-1

- խաղահրապարակ-2

- հանգստի գոտի-6

- մերձակա անտառային գոտի-6

- բակային տարածք-2

Քաղաքի հարավային անտառածածկ մասում տեղակայված հանգստի գոտիները, այդ թվում նաև սրտաբանական վերականգնողական կենտրոնը միասին կազմում են ռեկրեացիոն գոտի: Որպես առողջարանային և զբոսաշրջային նշանակություն ունեցող



քաղաք Ստեփանավանում անհրաժեշտ է ավելացնել զբոսայգիների, պուրակների, խաղահրապարակների, կանաչ գոտիների տարածքները: Ոլորտը պահանջում է գլոբալ մոտեցում:

1. 16. Համայնքի ուժեղ կողմերը և հնարավորությունները

Ստեփանավան համայնքի ուժեղ կողմերի մեջ մտնում է նրա բարենապատ աշխարհագրական դիրքն ու բնակլիմայական հրաշալի պայմանները՝ մեղմ ու չափավոր խոնավ կլիման, զով օդն ու սառնորակ ջուրը: Համայնքը մտնում է ՀՀ Լոռու մարզի գրեթե երկրաչափական կենտրոնում, Ձորագետի միջին հոսանքի աջ և ձախ ափերին: Մայրաքաղաք Երևանից գտնվում է 157 կմ, իսկ մարզկենտրոն Վանաձորից՝ 36 կմ հեռավորության վրա: Ստեփանավան քաղաքի ամբողջ երկարությամբ՝ արևելքից-արևմուտք անցնում է Հայաստանը ԱՊՀ երկրների հետ կապող Երևան-Թբիլիսի միջպետական նշանակության ավտոմոբիլային մայրուղին՝ Մ3, որը ունի նաև ռազմավարական նշանակություն, սակայն այստեղով իրականացվում են նաև տարանցիկ բեռնա և մարդափոխադրումներ: Ստեփանավանից սկսում են 2 հանրապետական նշանակության ճանապարհներ՝ Ստեփանավան-Յաղդան-Այգեհատ ՀՀ 33 և Ստեփանավան-Պրիվոլնոյե-Ախքյորի ՀՀ 34:

Ստեփանավանից հյուսիս-արևելք մոտ 15կմ հեռավորության վրա գտնվում է Ստեփանավանի օդանավակայանը, որից ներկայումս թռիչքներ չեն կատարվում:

• Կապը խոշոր քաղաքների հետ

Ստեփանավանը մշտական կապի մեջ է ՀՀ խոշոր քաղաքների հետ՝

Ստեփանավան-Երևան –յուրաքանչյուր օր 5-6 անգամ

Ստեփանավան-Վանաձոր- յուրաքանչյուր օր 6-7 անգամ

Ստեփանավան-Գյումրի- օրը մեկ անգամ

Ստեփանավան-Ավալվերդի-օրը 2 անգամ

Ստեփանավանը մշտական տրանսպորտային կապի մեջ է նաև Վրաստանի

Հանրապետության մայրաքաղաք Թբիլիսիի հետ, յուրաքանչյուր օր, օրը 2 անգամ

Ստեփանավանից երթուղային տաքսի է մեկնում հարևան պետության մայրաքաղաք:



Սակայն հարևան քաղաքային համայնք Տաշիրի հետ չկա հասարակական տրանսպորտի երթուղի: Հստակեցված չեն մարզկենտրոնի հետ կապ ունեցող տրանսպորտային ժամերը: Ավտոբուսների մեծ մասը Ստեփանավանից Վանաձոր են մեկնում առավոտյան ժամը 8:30-ից 10:30-ընկած ժամանկահատվածում, ապա ժամը 12-ին և ժամը 16:00-ին: Ժամը 12-ից 16-ն ընկած ժամանկահատվածում և ժամը 16-ից հետո հնարավոր չէ հասարակական տրանսպորտով գնալ մարզկենտրոն, որի կարիքը սակայն հաճախ է զգացվում թե՛ մարզկենտրոնում սովորող ուսանողների, թե՛ առհասարակ աշխատող քաղաքացիների շրջանում: Այս ոլորտում հարկավոր է հստակեցնել միջհամայնքային տրանսպորտի ժամային գրաֆիկները:

• **Ստեփանավանում առկա են ՀՀ պետական կառավարման մարմինների հետևյալ ճյուղային ստորաբաժանումները՝**

- . ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության Ստեփանավանի նստավայրի դատարան
- . ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Ստեփանավանի բաժին
- . ՀՀ ստիկանության ԱՎ վարչության Ստեփանավանի անձնագրային բաժին
- . ՀՀ Ազգային անվտանգության ծառայության Լոռու ՄՎ Ստեփանավանի բաժանմունք
- . Ստեփանավանի զինվորական կոմիսարիատ
- . ՀՀ ՊՆ 51556 գորամաս
- . Լոռու մարզի Ստեփանավանի հրշեջ փրկարարական ջոկատ
- . ՀՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության Լոռու մարզային բաժնի <<Ստեփանավան-Տաշիր>> բաժանմունք
- . ՀՀ ֆինանսների նախարարության Ստեփանավանի գանձապետական բաժին
- . ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության <<Զբաղվածության պետական ծառայություն>> գործակալության Ստեփանավանի տարածքային կենտրոն
- . ՀՀ սոցիալական ապահովության պետական ծառայության Ստեփանավանի սոցիալական ապահովության տարածքային ծառայություն
- . ՀՀ սոցիալական ծառայությունների Ստեփանավանի սոցիալական ծառայություն
- . ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Ստեփանավանի տարածքային ստորաբաժանում



. ՀՀ ազգային վիճակագրական ծառայության Լոռու մարզի գործակալության Ստեփանավանի տարածքային ներկայացուցչություն

. ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության Ստեփանավանի տարածքային ներկայացուցչություն

. <<Հայանտառ>> ՊՈԱԿ <<Ստեփանավանի անտառտնտեսություն>> մասնաճյուղ

.<<Սեյսմիկ պաշտպանության հյուսիսային ծառայություն>> ՊՈԱԿ <<Ստեփանավան>> համալիր կայան

.ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Տաշիրի տարածքային հարկային տեսչության Ստեփանավանի հարկ վճարողների սպասարկման բաժին

.ՀՀ <<Ազգային արխիվ>> Ստեփանավանի տարածքային ներկայացուցչություն

.ՀՀ մշակույթի նախարարության <<Ստեփանավանի մշակույթի և ժամանցի կենտրոն>> ՊՈԱԿ

• **Համայնքի գազաֆիկացվածության աստիճանը**

Ներկայումս համայնքի բնակչության 90% ապահովված է բնական գազով:

Համայնքի գազաֆիկացման, ջրամատակարարման և էլեկտրամատակարարման աստիճանը 2009-2012թ.թ.

Սպասարկվող ոլորտը	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.
Գազի բաժանորդներ	3674	3696	3752	3765
Ջրնուղի բաժանորդներ	4886	4935	5005	5038
Էլցանցի բաժանորդներ	5271	5298	5359	5465

• **Հեռախոսակապի և հեռուստակայանի առկայությունը**

Ստեփանավան քաղաքը լարային հեռախոսակապի տեսակետից ապահովված է ժամանակակից կապի միջոցներով: Այսպես՝ թվային ավտոմատ հեռախոսակայանն ունի 4000 համար, հին գծային ցանցը ամբողջովին փոխվել է 5000 համարի նոր ցանցով,



տեղադրվել է գծային ինտերնետի անհրաժեշտ քանակի սարքավորումներ: Ներկայումս քաղաքում կա 3000 լարային հեռախոսի և 1100 ինտերնետի բաժանորդ: Քաղաքում ըստ պատշաճի գործում են բջջային կապի հայաստանյան 3 օպերատորները՝ <<Բիլայն>>, <<ՎիվաՍել ՄՏՍ>>, 2010թ.-ից նաև՝ <<Օրանժ Արմենիա>>: Ոլորտի առկա հնարավորությունները բավարար են մատակա տարիների պահանջները բավարարելու համար, այդ իսկ պատճառով առայժմ նոր աշխատանքներ չեն պլանավորվում, միայն նախատեսվում է ինտերնետի արագության բարձրացում:

Ստեփանավան համայնքում առկա է 1 հեռուստակայան, որը հեռարձակում է 8 հեռուստաալիք, որից մեկը՝ մարզային: Մինչև 2011թ. վերջը Ստեփանավանն ուներ նաև տեղական հեռուստաընկերություն՝ <<Ֆորտունա>> հեռուստաընկերությունը, որը դարձավ մարզային և տեղափոխվեց մարզկենտրոն Վանաձոր: Դա մի կողմից ուրախալի է, քանի որ տեղական լուրերը և հաղորդումները, համայնքում կատարված աշխատանքներն ու առկա խնդիրները տեսանելի է լինում ամբողջ մարզին, սակայն մյուս կողմից դժվարեցրեց Ստեփանավանում տարբեր միջոցառումների ու իրադարձությունների՝ հատկապես չնախատեսված, հրատապ դեպքերի լուսաբանումը հեռուստատեսությամբ:

• Առևտրի հիմնական օբյեկտների առկայությունը

Համայնքում առկա են թվով 130 առևտրի հիմնական օբյեկտներ, որոնք հիմնականում կարողանում են ըստ պատշաճի սպասարկել համայնքի և հարակից գյուղերի բնակչության կենցաղային անհրաժեշտ մթերքներն ու պարագաները: Սակայն ցանկալի կլինի, որ առևտրի օբյեկտների շարքերում համայնքում լինեն մեծ ժամանակակից հանրախանութներ, նաև տուրիստների համար հետաքրքրություն ներկայացնող հայկական հուշանվերների, խորհրդանիշների խանութներ, քանի որ Ստեփանավանը տուրիստական նշանակության քաղաք է և այս առումով արտասահմանից Ստեփանավան ժամանած զբոսաշրջիկները չեն կարողանում փոքրիկ քաղաքից գնել իրենց հետաքրքրող հայկական կամ քաղաքը բնորոշող հուշանվերներ, և քաղաքի խանութները՝ իրենց տեսականիով, հաճախ չեն բավարարում զբոսաշրջիկների և քմահաճ հաճախորդների պահանջները:

• Տուրիզմի զարգացման հնարավորությունները

Ստեփանավան համայնքի ուժեղ կողմերից մեկն էլ տուրիզմի զարգացման հնարավորություններն են: Որպես լավագույն հանգստավայր ու առողջարանային



պոտենցիալ ունեցող քաղաք, Ստեփնավանը դեռևս Ստեփան Շահումյանի բնորոշմամբ համարվել է <<երկրորդ Շվեյցարիա>>: Քաղաքն ունի տուրիզմի զարգացման համար անհրաժեշտ մեծ պոտենցիալ՝ քաղաքի բնակլիմայական պայմանները, մեղմ, չափավոր կլիման, զով օդը, սառնորակ ու հանքային աղբյուրները, Ձորագետի կիրճը, կանաչապատ սարավանջերն ու սոճու անտառները հրաշալի պայմաններ են ընձեռնում էկոտուրիզմի զարգացման համար: Դրան նպաստում է նաև զբոսաշրջիկների կողմից բարձր գնահատվող բնական, թարմ ու առողջ բնամթերքի առկայությունը, ինչպես նաև մի շարք պատմամշակութային կառույցների ու տեսարժան վայրերի առկայությունը, ինչպիսիք են՝ Լոռե միջնադարյան բերդաքաղաքը, դամբարանադաշտը, մի շարք հին ու նոր եկեղեցիներ, մատուռներ, ինչպես նաև Ստեփանավանից ընդամենը մի քանի կիլոմետր հեռավորության վրա գտնվող <<Բուսաբանական այգին>>, որը հայտնի է <<Դենդրոպարկ>> անունով:

1. 17. Համայնքի թույլ կողմերը

- **Ներհամայնքային փողոցների ու ճանապարհների վատ վիճակը**

Նորակառույց Ձախսփնյա 4-րդ միկրոշրջանի փողոցները՝ 3.2կմ, դեռևս բնահողային վիճակում են չունեն երթևեկելի մասի ոչ մի տեսակի ծածկ: Համայնքի ծայրամասային մի շարք փողոցներ ունեն բարեկարգման և ասֆալտապատման անհրաժեշտություն:

- **Համայնքում առկա կիսակառույցների թիվը՝**

Համայնքում կա 14 կիսակառույց բազմաբնակարան բնակելի շենք և 214 առանձնատուն, կիսակառույց վիճակում են քաղաքապետարանին կից, քաղխորհրդի գործոկոմի նախկին վարչական շենքը, մարզադպրոցի մասնաշենքը, նախկին բաղնիքի շենքը, որը հատկացված է հայ առաքելական եկեղեցուն <<Հայորդաց տուն>> կառուցելու նպատակով: Ոչ բարվոք վիճակում են նաև քաղաքի նախկին կենցաղի և առևտրի տան, կինոյի շենքերը, որոնք ունեն սեփականատերեր, սակայն շենքերը չեն օգտագործվում իրենց նպատակային նշանակությամբ:

- **Համայնքում առկա վթարային շենքերի թիվը՝**

Համայնքում կան վթարային տարբեր աստիճանների 14 բազմաբնակարան բնակելի շենք և 370 առանձնատուն: Բազմաբնակարան շենքերից 6-ը համարվում են 2-րդ կարգի



վթարային շենքեր, 7-ը՝ 3-րդ կարգի և 1-ը՝ 4-րդ կարգի վթարային շենք: Վթարային է նաև Ստեփանավանի Գյուղատնտեսական քոլեջի նախկին վարչական շենքը և հարակից ավտոտնակները, որոնք ենթակա են քանդման, քանի որ վտանգ են ներկայացնում ուսանողության համար:

- **Գործազրկության մակարդակը՝ 18.5%**

Մեծ աշխատուժի առկայությունը- Համայնքի աշխատունակ բնակչության թիվը կազմում է 7500 մարդ, որոնցից վարձատրվող աշխատանքով զբաղված են 3000 մարդ: Հիմնական մասը զբաղված են մանր ու միջին բիզնեսով և հանքարդյունաբերության մեջ՝ <<Սագամար>> ՓԲԸ-ում:

- **Փախստականների անօթևանության աստիճանը՝** Համայնքում անօթևան փախստականներ չկան, քաղաքի Ձախափնյա թաղամասում 3-րդ միկրոշրջանում, Բաքվից ներգաղթած փախստականների համար ՄԱԿ-ի կողմից իրականացված ծրագրով կառուցվել է նոր թաղամաս:

- **Խմելու ջրի ներհամայնքային համակարգի մաշվածությունը և վերանորոգման անհրաժեշտություն**

Ստեփանավանի խմելու ջրի ներհամայնքային համակարգը կառուցվել է անցած դարի 50-ական թվականներին և ներկայումս գտնվում է բավականին քայքայված վիճակում: Խմելու ջրի ներհամայնքային համակարգի մաշվածության աստիճանը տոկոսային արտահայտությամբ 36% է: Համայնքի 63կմ երկարությամբ ջրաբախշիչ ցանցից հիմնանորոգված է ընդամենը 12կմ, մնացած մեծ մասը ևս վերանորոգման անհրաժեշտություն ունի:



2. ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՌԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՆԵՐԸ

Ռազմավարությունը

Համայնքի քառամյա զարգացման ծրագրի ռազմավարությունն է՝ բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային, հանգստի և ժամանցի պայմանները, համայնքը դարձնել տարածաշրջանային զբոսաշրջության կենտրոն, մաքուր, բարեկարգ և գրավիչ բնակավայր:

Համայնքի քառամյա զարգացման ծրագրի հիմնական նպատակներն ու ուղղությունները

- Բարեկարգել ներհամայնքային ճանապարհներն ու փողոցները
- Բարելավել փողոցային լուսավորության, ջրամատակարարման, աղբահանության համակարգերի գործունեությունը, ապահովել համայնքը շուրջօրյա խմելու ջրով
- Հնարավորինս ավարտել կիսակառույց շենքերի շինարարությունը
- Ժամանակավոր կացարաններում բնակվող ընտանիքներին հնարավորինս ապահովել բնակարաններով
- Հնարավորինս բարելավել սոցիալապես անապահով խավի վիճակը
- Նպաստել համայնքի տարածքում նոր աշխատատեղերի ստեղծմանը՝ զարկ տալով մանր և միջին բիզնեսի, գյուղատնտեսության զարգացմանը
- Կազմակերպել համայնքի բնակչության մարզամշակութային կյանքը, ազատ ժամանց ու հանգիստը, նպաստել տուրիզմի զարգացմանը
- Բարելավել քաղաքապետարանի աշխատակազմի կառավարման արդյունավետությունը
- Ակտիվորեն համագործակցել հասարակական կազմակերպությունների, ակտիվ քաղաքացիների հետ՝ նպաստելով համայնքում մասնակցային կառավարման ձևավորմանը:



3. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ
ԾՐԱԳՐԵՐԸ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ

3.1 Տարածքային զարգացում, քաղաքաշինություն

- Կատարել նպատակային հողահատկացումներ համայնքում՝ հատկապես Ձախափնյա թաղամասում, հասարակական սպասարկման շենք-շինությունների կառուցման նպատակով՝ առևտրի օբյեկտներ, ռեստորաններ, սրճարաններ, սննդի արագ սպասարկման կետեր, գեղեցկության սրահներ, ինտերնետ ակումբ, լվացքատուն, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման կետեր և այլն:

Առաջիկա 4 տարիների ընթացքում համայնքը նախատեսում է օտարել և օգտագործման տրամդրել՝

. 50-60հա՝ գյուղատնտեսական նշանակության հող

. 20-30հա՝ քաղաքաշինական նպատակով՝ սպասարկման ոլորտի օբյեկտների կառուցապատման համար

. 1հա՝ բնակելի տների կառուցապատման նպատակով:

- Քաղաքի անտառամերձ ռեկրեացիոն գոտում և Ձախափի 3 լճերի շրջակայքում հատկացնել հողատարժքներ՝ ժամանակակից հյուրանոցային համալիրների, հանգստյան և զբոսաշրջիկների համար նախատեսված օբյեկտների կառուցման նպատակով:

- Կենտրոնական հրապարակի հյուսիս-արևմտյան մասում նախատեսել նոր եկեղեցու կառուցումը:

- Հրապարակի Եղեռնի գոհերի հիշատակին նվիրված խաչքարը համալրել նոր հուշակոթողով:

- Ստեփանավանի Երիտասարդական փողոցում՝ նախկին Չերյոմուշկա թաղամասում կառուցել 1988թ. Երկրաշարժի զոհերի հիշատակի հուշարձան, տեղադրել հուշատախտակ մինչերկրաշարժյան Ստեփանավանի և Չերյոմուշկա թաղամասի մասին պատմող տեղեկատվությամբ:



- Քաղաքի մուտքի մոտ նախատեսել <<Բարի գալուստ Լոռե-Ջալալօղլի Ստեփանավան>> մուտքի կամարի կառուցում և քաղաքի պատմությունը հակիրճ ներկայացնող երկլեզու քարե ցուցանակի տեղադրում:
- Քաղաքի գլխավոր հատակագծում կա ավտոկայանի կառուցման ծրագիր, որոշել դրա անհրաժեշտությունը և մտցնել աշխատանքային ծրագրի:
- Հնարավոր միջոցներ գտնել և քաղաքում տեղադրել արձաններ, ցուցանակների և քաղաքի խորհրդանիշեր:

3.2 Բնակարանային-կոմունալ տնտեսություն

Քառամյա ծրագրի շրջանակներում նախատեսվում է՝

1. «Ալուշտա» տիպի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքները հիմնանորոգել՝ դրանք փոխարինելով նոր, թեք լանջավոր տանիքներով (մնացել է 3 շենք): 2013թ.-ին նախատեսվում է հիմնանորոգել Վիրահայոց 80/ա և Դեսին 32 շենքերի տանիքները, իսկ 2014թ.-ին՝ Դեսին 36 շենքի տանիքը:

2. «Աշոտաբերդ» թաղամասի երկհարկանի փայտաշեն, բազմաբնակարան շենքերի հիմնանորոգման խնդիրների լուծմանն ընթացք տալու նպատակով՝

- Ներկայացնել մարզային և համապատասխան գերատեսչությունների շենքերի պիտանելիության և հետագա շահագործման անվտանգության իրատեսական վիճակը, խնդրել կազմել համապատասխան մասնագիտական հանձնաժողով՝ խնդիրը տեղում ուսումնասիրելու և համապատասխան եզրակացություն տալու նպատակով:

- Հաշվառել և ներկայացնել ոչ աղետի հետևանքով անօթևան մնացած և ժամանակավոր կացարաններում բնակվող ընտանիքների թիվը՝ վերջիններիս բնակարանաշինական ծրագրերում ընդգրկելու նպատակով:

- Համայնքի տարածքի բազմաբնակարան շենքերի սպասարկումն արդիականացնելու նպատակով բնակիչների շրջանում տանել համապատասխան բացատրական աշխատանք՝ համատիրություններ ստեղծելու նպատակով:

- Բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող գույքի և ինժեներական ցանցերի սպասարկման և պահպանման



նպատակով կատարել գույքագրում՝ ստուգելով և արձանագրելով շենքերում ստեղծված իրավիճակը:

- Գույքագրել համայնքի տարածքի՝ երկրաշարժի հետևանքով վնասված անհատական տները, փաստագրել դրանց իրատեսական կարգավիճակը, կառավարական, վարկային և բանկային ծրագրերում ընդգրկելու նպատակով:

3.3. Աղբահանություն և փողոցների մաքրում

1. Քառամյա ծրագրի շրջանակներում նախատեսվում է բնակչությունից՝ (սեփական առանձնատների հատված) տեղափոխվող աղբի գրաֆիկների փոփոխություն՝ 10 օրից այն դարձնելով յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ, իսկ բազմաբնակարան շենքերից՝ 2 օրը մեկ:
2. Աջակցել «Թափոնների կառավարում – ԵՀԳԳ Արևելք» տարածաշրջանային ծրագրին՝ համայնքի համար նոր աղբավայրի կառուցման նպատակով: Առկա է մեթոդական ցուցումների ամբողջ փաթեթը:
3. Ընդլայնել քաղաքի մեխանիզացված և ձեռքով ավվող փողոցների մակերեսները՝ նոր բարեկարգ փողոցների հաշվին:
4. Քառամյա ծրագրի շրջանակներում համայնքի միջոցների հաշվին ընդլայնել աղբահավաք մեքենաների քանակը, ձեռք բերել նոր ձյուն մաքրող և սառցակալման դեմ միջոցառում իրականացնող մեքենա:
5. Կենտրոնական փողոցներում տեղադրել փոքր աղբամաններ:
6. Կազմակերպել քաղաքի տարբեր մասերում և փողոցներում ժամանակի ընթացքում կուտակված շինարարական աղբի և թափոնների հեռացման, հողաթմբերի հարթեցման, մայթերից հողի քերման, գազոնների մաքրման և բարեկարգման աշխատանքներ:
7. Բնակչության շրջանում իրականացնել ստուգայցեր՝ փողոցի հարակից տարածքներում աղբակույտները, շինարարական ինչպես նաև գոմաղբի կուտակումները բացառելու, կարգազանց քաղաքացիների նկատմամբ վարչական տույժ նշանակելու, ինչպես նաև դրանց անունները լրատվամիջոցներով հայտնելու համար:
8. Քաղաքի բարեկարգ, մաքուր բակերի և փողոցների թիվը ավելացնելու և բնակիչների մասնակցությունը այդ գործընթացում ակտիվացնելու նպատակով անցկացնել

<<Բարեկարգ բակ>>, <<Մաքուր փողոց>> և նմանատիպ խրախուսական, մրցութային միջոցառումներ:

3.4. Կանաչ տարածքների խնամք

1. Քառամյա ծրագրում նախատեսվում է կանաչապատ տարածքների ավելացում, եղած ծառերի և գազոնների պահպանում: Հիմնական ցուցանիշ հանդիսացող մեկ շնչին ընկնող կանաչ տարածքը հասցնել 6մ²
2. Վերականգնել Միլիոնի, Բաղրամյան, Պիոների փողոցների գազոնների ոչնչացված և անխնամ մակերեսները, որի ծավալը կազմում է 6200քմ :
3. Անհրաժեշտությունից ելնելով՝ կատարել քաղաքի փողոցների ծառերի էտման, ինչպես նաև ծառաբների պարբերական պահպանողական և էսթետիկ սպիտակեցման աշխատանքներ Բաղրամյան, Միլիոնի, Նժդեհի, Ռուսթավելի, Նալբանդյան, Մեղապարտի, Ս. Նշան փողոցներում: Նշված բոլոր փողոցներում վերականգնել չորացած և հատված ծառերը:
4. Մինչև 2016թ. Ձախսափնյա նորակառույց թաղամասում ինչպես նաև Վիրահայոց, Ս. Վարդան, Աշոտ Երկաթ մայրուղիների երկարությամբ կատարել ծառատունկ, ներգրավելով տարածքներին հարակից տնտեսվարող սուբյեկտներին, առևտրային և ուսումնական հաստատություններին, ֆիզիկական անձանց:
5. Ռումինական, Պրոմեթևս և Դեսինի թաղամասերում ստեղծել միջթաղային կանաչ տարածքներ՝ մանկական խաղահրապարակներով:

3.5. Արտաքին լուսավորություն

- Համայնքի կենտրոնական փողոցների լուսավորությանը զուգընթաց ձեռնամուխ լինել ծայրամասային փողոցների լուսավորության ցանցի ընդլայմանը:

ՀՀ	Փողոցի անվանումը	Քանակը		2013	2014	2015	2016
		տեղամ. երկար	լուսավոր. կետերի թիվը				
1	Մատրոսով, Բաֆֆի, Պողոյան, Խանջյան, Մեսրոպյան, Թումանյան,	5500մ	180	45	50	30	55



	Կամո, Արևելյան						
2	Մ. Գորկի, Նանսեն, Հ. Ավետիսյան, Կոմիտաս, Մայակովսկի	3900մ	146	36	30	42	38
3	Ս. Նովա, Չայկովսկի, Խորենացի, Թելման, Քալաշյան, 409դիվ. Աղայան	3900մ	130	28	34	38	30
4	Ձախափնյա 4-րդ միկրոշրջան անհատական թաղամաս	3800մ	104	20	26	28	30
5	Բակերի լուսավորութ. Պրոմեթեա, Դեսին					20	30

2013-2016թ.թ. ընթացքում նախատեսվում է Ձախափնյա թաղամասի Սուրբ Վարդան փողոցում կառուցվելիք առանձնատների էլեկտրասնուցման համար կառուցել 0.4 ԿՎ օդային գիծ, վերակառուցել Բաղրամյան-Արևելյան փողոցների խաչմերուկին մոտակա թիվ 6649 տրանսֆորմատորային ենթակայանը և 3074 ԼՏԵ-ից սնվող Սուրբ Նշան, Աղայան փողոցներին և 409-րդ դիվիզիային սնող 0.4 ԿՎ օդային գծերը:

3. 6. Թափառող կենդանիների վնասագերծում

Առաջիկա 4 տարիներին ևս հետևողականորեն շարունակել համայնքի տարածքում թափառող կենդանիների վնասագերծմանն ուղղված միջոցառումները:

3. 7. Ջրնուղ-կոյուղի համակարգ

Շարունակել «Ասիական զարգացման բանկի» ներդրումային ծրագրով սկսված՝ 2013-2014թ.թ. համար նախատեսված Լոռու մարզի Ալավերդի, Տաշիր, Ստեփանավան համայնքների ջրամատակարարման բարելավման ներդրումային ծրագիրը՝ ընդհանուր 5.2մլն. դոլլար



արժողությամբ, որն իրենից ենթադրում է համայնքների ջրամատակարարման ներքին ցանցում առաջին ծրագրով կատարված աշխատանքների շարունակականությունը:

- • Ջրամատակարարման բարելավմանն ուղղված միջոցառումների շրջանակներում աջակցել «Հայջրմուկոյուղի» ՓԲԸ և « Զինջ» ՍՊԸ-ին՝ ծրագրի 3-րդ փուլի նախագծային աշխատանքների իրականացմանը. առաջնահերթություն տալ ոչ ասֆալտապատ փողոցների ջրագծերի փոխարինմանը, հրատապ իրականացնել Թելմանի փողոցի՝ կամրջից մինչև Ս. Նշան փողոցի խաչմերուկ Փ 400 պողպատե խողովակի փոխարինումը:

- «Հայջրմուկոյուղի» ՓԲԸ-ի հետ համատեղ ուսումնասիրել հնարավոր բոլոր տարբերակները, որոնք կնպաստեն քաղաքին մատակարարվող ինքնահոս ջրի քանակի ավելացմանը՝ դրանց քանակը համալրելով նաև կորուստների հաշվին:

- Քաղաքին մեխանիկական եղանակով մատակարարվող ջրի ժամային գրաֆիկը 2013թ.-ին հասցնել ամենօրյա՝ 6 ժամ տևողությամբ, հաջորդ 3 տարիների ընթացքում այն դարձնել շուրջօրյա:

- Արմանիս թաղամասի տարածքը սպասարկող ջրագծերը և աղբյուրները վերցնել համայնքային հաշվեկշիռ, հաջորդիվ այն շահագործելու և սպասարկելու համար համայնքի ողջ տարածքի ջրագծերի հետ միասին անհատույց հանձնել «Հայջրմուկոյուղի» ՓԲԸ-ին:

- Համայնքի տարածքում ջրագծերի և կոյուղագծերի վերանորոգման ընթացքում քանդած տարածքների վերանորոգման նպատակով կնքել պայմանագիր «Հայջրմուկոյուղի» ՓԲԸ-ի հետ, կազմել երկկողմ ակտեր, հաշվել պատճառած վնասի չափը:

- Ջրամատակարարման բարելավմանն ուղղված միջոցառումների ծրագրով իրականացվող նախագծային աշխատանքների ժամանակ ցուցաբերել մասնագիտական օժանդակություն, իսկ շինարարական աշխատանքների ընթացքում իրականացնել տեխնիկական հսկողություն:

3. 8. Գազամատակարարում

- Շարունակել համայնքի տարածքում գազամատակարարման բարելավմանն ուղղված աշխատանքները, իրականացնել Միլիոն, Թելման, Սուրբ Նշան, Մ. Գորկի, Պուշկին, Սունդուկյան, Հարությունյան, Տերյան, Եկեղեցի, Պիոներներ, Սայաթ-Նովա, Դուրյան, Մ. Սպարապետ, Երիտասարդական փողոցների գազատար խողովակների ներկում և ուղղում:



3. 9. Տրանսպորտ, ճանապարհային տնտեսություն, բարեկարգում

Ծրագրի ընթացքում նախատեսվում է քաղաքի տարածքում իրականացնել փողոցների հիմնանորոգման՝ երթևեկելի մասերի ասֆալտապատման, մայրերի և եզրաքարերի հիմնանորոգման, ինչպես նաև Ձախափնյա նորակառույց թաղամասում բնահողային փողոցների խճապատման աշխատանքներ, հետևյալ ծավալներով՝

N	Աշխատանքի բնութագիրը	Աշխատանքների իրականացման վայրը	2013	2014	2015	2016
1	փողոցների հիմնանորոգում	Չարենց, Ս. Վարդան, Բաֆֆի, Պիոնների, Խորենացի	21200քմ	23100քմ	26700քմ	31000քմ
2	փոսային նորոգում	փողոցները կընտրվեն առաջնայնության կարգով և պահանջվող մակերեսով	1620քմ	1830քմ	2100քմ	2400քմ
3	երթևեկելի մասերի ասֆալտապատում	Ս. Նովա, Սպարապետ, Հ. Ավետիսյան, Կամո, Մատրոսով, Պողոսյան, Տերյան, Մայակովսկի, Կոմիտաս, Իսահակյան	14000ք մ	16500ք մ	18.800քմ	20500ք մ
4	Ձախափնյա բնահողային փողոցների խճապատման հնարավորություն	Ձախափնյա 4-րդ միկրոշրջանի	8000քմ	8200քմ	9100քմ	9500քմ



- Ծրագրային պլան մտցնել ռազմավարական նշանակություն ունեցող Ձորագետի կիրճի կամուրջի հիմնադրույթումը, այդ նպատակով բանակցել կիրճում հէկ-եր կառուցող ընկերությունների հետ, նրանց հետ կնքել պայմանագրեր համայնքից ստացված իրենց շահույթի մի մասը ի շահ համայնքի օգտագործելու համար:
- Հաշվի առնելով, բնակչության կողմից առկա ներքաղաքային հասարակական տրանսպորտի պահանջարկը՝ օրենքի սահմաններում կազմակերպել և անցկացնել ներհամայնքային տրանսպորտային երթուղիների մրցույթ՝ հաղթող կազմակերպությանն առաջարկելով ապահովել հասարակական տրանսպորտի առնվազն 2 երթուղի:
- Կատարել ներքաղաքային տրանսպորտի համար նախատեսված կանգառների հողահատկացում և կառուցում:
- Ուշադրության կենտրոնում պահել ճանապարհային երթևեկության նշանների տեղակայման վիճակը, դպրոցների մոտ և այլ մարդաշատ վայրերում տեղակայել երթևեկության համապատասխան նշաններ, տեղադրել լուսակիրներ, գծանշել փողոցների անցումները և այլն:
- Փողոցների խաչմերուկներում տեղադրել փողոցների անուններով ցուցավահանակներ՝ հստակ ցույց տալով փողոցները:
- Հստակեցնել միջհամայնքային տրանսպորտի ժամային գրաֆիկները, որպեսզի նրանք աշխատեն բնակչության պահանջներին համապատասխան, ավելի սահուն գրաֆիկով
- Ստեփանավան-Տաշիր հարևան համայնքները չունեն միջքաղաքային տրանսպորտ: Բարձրացնել խնդիրը՝ առաջարկելով երթուղային ծառայություններ մատուցող կազմակերպություններից որևէ մեկին բացել նոր՝ Ստեփանավան-Տաշիր միջքաղաքային հասարակական տրանսպորտային երթուղի:

3. 10. Առևտուր և սպասարկում

- Հետևողական լինել, որպեսզի համայնքի տարածքում գործող առևտրի և սպասարկման ոլորտի օբյեկտներում պահպանվեն <<Առևտրի և ծառայությունների մասին>> ՀՀ օրենքով սահմանված պահանջները և սպառողի իրավունքներն ու շահերը, վերահսկել՝
 - . Արտահագուստի առկայությունը
 - . Ապրանքների և ծառայությունների գնապիտակների առկայությունը



. Մթերքների ժամկետային պիտանելիությունը

. Սանիտարահիգիենիկ պայմանների և պահանջների ըստ պատշաճի կատարումը և այլն...

• Առևտրի և սպասարկման ոլորտի օբյեկտների սեփականատերերի հետ համատեղ աշխատանքի արդյունքում հասնել այն բանին, որ համայնքում գնալով ավելանան առևտրի և սպասարկման ժամանակակից պահանջներին համապատասխան խանութներն ու սպասարկման օբյեկտները, լինեն ժամանակակից հանրախանութներ, տուրիստներին հետաքրքրող հայկական հուշանվերների, առողջ բնամթերքների խանութներ՝ օրինակ «Առողջ բնամթերք», «Տուրիստի համար», «Ստեփանավանի բնության բարիքները» և նմանատիպ վաճառքի կետեր, որոնք կխոսեն նաև քաղաքի և նրա կենսամակարդակի մասին:

3.11. Հողօգտագործում և գյուղատնտեսություն

• Համայնքի տարածքում տեղադրել հակակարկտային կայաններ՝ կարկտահարության հետևանքով գյուղատնտեսական մշակաբույսերին ու այգիներին սպառնացող վտանգը կանխելու և կարկուտի հասցրած վնասները հնարավորինս նվազեցնելու նպատակով:

• Կազմակերպել գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների, վնասատուների և մոլախոտերի դեմ պայքարի աշխատանքները, վերականգնել կարկտահարության դեմ պայքարի ջոկատի գործունեությունը:

• Համայնքի Օրան-Լոռի և Շագարդա տեղամասերում ավարտել Կամենկա գետից ջրատարի անցկացման աշխատանքները՝ անասուններին խմելու ջրով ապահովելու համար:

• Հասնել այն բանին, որ համայնքում գործի հողի անալիզի լաբորատորիա: Այդ նպատակով որպես բազա օգտագործել Ստեփանավանի գյուղատնտեսական քոլեջի հողի անալիզի մինի լաբորատորիան, որը կարող է գյուղացիական տնտեսություններին օգտակար լինել հողի որակի որոշման գործում, իսկ լաբորատորիայի մասնագետները կարող են իրականացնել մասնագիտական խորհրդատվություն:

• Քոլեջի մասնագետների միջոցով կազմակերպել համայնքի ֆերմերների համար նախատեսված գյուղատնտեսական, անասնաբուժական և տնտեսագիտական բնույթի



խորհրդատվական դասընթացներ և բիզնես-ծրագրեր՝ արտադրությունը զարգացնելու և ժամանակակից շուկայական պահանջներին համահունչ վարելու ուղղությամբ:

- Ստեփանավան-Դեսին համագործկցության արդյունքում իրականացնել ներդրումային քաղաքականության ծրագրեր՝ մշակելով տեղական հումքի արտադրության վերամշակման, հյուրերի, կարտոֆիլի, եգիպտացորենի արտադրության և արտահանման ծրագրեր:

3.12. Բնություն և շրջակա բնական միջավայրի պահպանություն

- Ստեփանավանն իրական հանգստավայր դարձնելու նպատակով հարկավոր է ավելացնել կանաչապատ գոտիները, զբոսայգիներն ու պուրակները, կանաչապատել հասարակական նշանակության սպասարկան և ժամանցի օբյեկտների տարածքները՝ հասարակական կանաչապատ տարածքների պահանջներին համապատասխան: Նպաստել, որպեսզի թաղամասերում ստեղծվեն ներթաղամասային կանաչ գոտիներ:
- Համագործակցելով քաղաքի կրթական և հասարակական կազմակերպությունների, հիմնարկ-ձեռնարկությունների հետ՝ պարբերաբար (տարեկան գոնե 2 անգամ) կազմակերպել <<Մաքուր Ստեփանավան>> և <<Կանաչ Ստեփանավան>> ակցիաներ, որի ընթացքում իրականացնել համաքաղաքային շաբաթօրյակներ և ծառատունկեր՝ ներառելով քաղաքի կենտրոնական մասն ու ծայրամասերը, ինչպես նաև Ձորագետի կիրճը, քաղաքամերձ անտառային գոտին, պատմամշակութային արժեք ունեցող հուշարձանների ու մատուռների տարածքները՝ Մայրի ձոր, Սուրբ Նշան, Չեչմանիս...:
- Աշոտ Երկաթ և Վիրահայոց մայրուղիների երկյանքով իրականացնել ծառատունկ, իրականացնել Ռումինական թաղամասի և Դեսինի պուրակի կանաչապատում:
- Ուշադրության կենտրոնում պահել Ձորագետի կիրճում կառուցվող փոքր հէկ-երի գործունեությունը, հետևել, որ նրանք չխաթարեն շրջակա բնական միջավայրի ֆլորան և ֆաունան և պահպանեն ՀՀ բնապահպանության նախարարության փորձաքննության արդյունքում սահմանված չափորոշիչները՝ չվերցնելով սահմանված նորմերից ավել քանակի ջուր:
- Լուրջ ուշադրություն դարձնել <<Սագամար>> լեռնահարստացուցիչ ֆաբրիկայի գործունեությանը, հետևելով, որ հանքարդյունաբերական վնասակար



արտանետումները վնաս չհասցնեն շրջակա բնական միջավայրին. արտադրական ու կենցաղային արտանետումները գտվեն հատուկ մաքրման կայանների միջոցով, իսկ հանքում օգտագործված ջուրը չթափվի բնության մեջ՝ մասնավորապես Ձորագետի կիրճ, այլ հետ մղվի լեռնահարստացուցիչ ֆաբրիկա:

- Ձախափնյա տարածքում նախատեսել հյուսիսային բլրապատ տարածքների անտառատնկման բնապահպանական միջոցառումներ՝ որպես քամիներից պաշտպանման և միկրոկլիմայի մեղմացման միջոցառում, նաև որպես հեռանկարային ռեկրեացիոն նշանակության անտառապուրակային գոտու կազմակերպման պահուստային տարածք:
- Նախատեսել, որպեսզի քաղաքի հարավային մասում տեղակայված հանգստյան գոտիների միջև ձևավորվի միասնական երթուղի, որն անցնելով անտառի եզրագծով, կստեղծի միասնական կապ գրեթե բոլոր հանգստյան օբյեկտների միջև, ինչպես նաև անցնելով քաղաքի ողջ տարածքի նկատմամբ փոքր-ինչ բարձր նիշերով, կծառայի որպես զբոսաշրջային երթուղի պարկվել՝ բացելով բարձրաբժեք դիտակետեր դեպի քաղաքային ողջ համայնապատկերի ընկալումը:
- Նշված երթուղին, դեպի անտառամերձ հանգստյան գոտիներ տանող ծառուղին /ալեա/ և Դեսինի պուրակը համալրել նոր դեկորատիվ ծառերով, ինչպես նաև գեղեցիկ ծաղիկների գազոններով: Այդ գազոնների խնամքը բաժանել քաղաքի տարբեր հիմնարկ-ձեռնարկություններին և խրախուսել նրանց աշխատանքը՝ կազմակերպելով տարբեր միջոցառում-մրցույթներ, օրինակ՝ <<Ծաղկի տոն>>, <<Լավագույն կանաչապատ կամ ծաղկապատ տարածք>>, խրախուսել լավագույն ձևավորումներն ու ինքնատիպ գաղափարների դրսևորումները և այլն: Նմանատիպ մրցույթներ անցկացնել նաև ներթադամասային կանաչ գոտիների ու բակերի միջև:

3.13. Կրթություն

Նախադպրոցական ուսումնական հաստատություններ (ՆՈՒՀ)

Իրականացնելով նախադպրոցական կրթության ոլորտի պետական քաղաքականություն՝ քաղաքապետարանը պարտավորվում է՝



- Համայնքի մանուկների համար ապահովել պայմաններ նախադպրոցական կրթություն ստանալու համար, վարել նախադպրոցական տարիքի երեխաների հաշվառում:
- Ապահովել համայնքի նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական ու հոգեկան առողջապահության պահպանումն ու ամրապնդումը, երեխաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, նախապատրաստել հանրակրթական դպրոցի ուսուցմանը:
- Նպաստել ՆՈՒՀ-տարրական դպրոց կապի ապահովմանն ու ամրապնդմանը:

Առաջիկա 4 տարիների ընթացքում քաղաքապետարանը նախատեսում է՝

- Նորացնել ՆՈՒՀ-երի կոշտ և փափուկ գույքը (սեղան-աթոռներ, անկողնային պարագաներ, խաղալիքներ-խաղամիջոցներ, դիդակտիկ նյութեր, խոհանոցային սպասք, բուժապարկան համար անհրաժեշտ պարագաներ, տեխնիկական սարքավորումներ ու միջոցներ՝ համակարգիչներ, աուդիո և վիդեո սարքավորումներ...):
- Բոլոր ՆՈՒՀ-երն ապահովել հակահրդեհային միջոցներով, մշտական տաք և սառը հոսող ջրով, նորոգել ջրամատակարարման համակարգերը, սանհանգույցները:
- Կառավարության կողմից իրականացվող հրատապ ծրագրերի մեջ ներառել թիվ 2 ՆՈՒՀ-ի շենքի հիմնանորոգումը, բակի բարեկարգումն ու գազաֆիկացումը: Որից հետո ՆՈՒՀ-ում ավելացնել երեխաների թվակազմը, կոմպլեկտավորել տարիքային խմբերը՝ նպաստելով համայնքում ՆՈՒՀ-երի համակարգից դուրս մնացած նախադպրոցական տարիքի երեխաների ՆՈՒՀ ընդգրկմանը:
- Հաշվի առնելով, որ ՆՈՒՀ-երում խմբերի խտությունը գերազանցում է սահմանված նորմերը՝ թիվ 1 և թիվ 3 ՆՈՒՀ-երի շենքերին կից կառուցել լրացուցիչ խմբասենյակներ և օժանդակ տնտեսության համար նախատեսված սենյակներ:
- Բարեկարգել ՆՈՒՀ-երի բակերը, ստեղծել փոքրիկ խաղահրապարակներ՝ կանաչապատելով դրանց շրջակայքը: Վերանորոգել պարիսպներն ու խմբասենյակները, թիվ 3 ՆՈՒՀ-ի ներառական կրթության համար նախատեսված մասնաշենքը:
- Համայնքի ՆՈՒՀ-երի միջին և ավագ խմբերում վերականգնել ոռոսաց լեզվի ուսուցումը՝ մայրենի լեզվի հենքի վրա:



Հանրակրթական ուսումնական հաստատություններ

Համագործակցելով տարբեր հիմնադրամների հետ (<<Լինսի>> հիմնադրամի <<Դպրոցաշինության>> ծրագրերի գրասենակի, <<ՀՀ Սոցներդրումների հիմնադրամ>>-ի և այլն)՝ ծրագիր մտցնել համայնքի հանրակրթական դպրոցների կոսմետիկ վերանորոգման, ջրագծերի և կոյուղագծերի փոխման, ջեռուցման համակարգերի ձևափոխման, մարզահրապարակների ձևավորման, ժամանակակից լաբորատորիաների ստեղծման և կահավորման, գույքի նորացման հարցերը, ինչպես նաև թիվ 1 դպրոցի մարզադահլիճի և հանդիսությունների դահլիճի կառուցման, թիվ 3 դպրոցի ցանկապատի և վերանորոգման, թիվ 1 վարժարանի շենքային պայմանների բարելավման, թիվ 5 դպրոցի տանիքի հիմնանորոգման և թիվ 6 դպրոցի դասասենյակներ ներառող նոր մասնաշենքի կառուցման հարցերը: Ավարտին հասցնել Արմանիսի դպրոցի մարզադահլիճի կառուցումը:

Միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններ

Ստեփանավանի գյուղատնտեսական քոլեջը տարածաշրջանի միակ պետական գյուղատնտեսական ուսումնական հաստատությունն է, որը իր ներկայիս կատարած աշխատանքերով նպաստում է տարածաշրջանում ագրոարդյունաբերության զարգացմանը՝ պատրաստելով ներկայիս աշխատաշուկայում պահանջարկ ունեցող մասնագետներ՝ անասնաբույժ, ապրանքագետ, մենեջմենթ... Քոլեջն ունի ընդլայնման հեռանկարներ. կարող է իրականացնել մասնագիտական խորհրդատվություն անասնաբուծության և տնտեսագիտության բնագավառներում, իսկ քոլեջի հողի անալիզի մինի լաբորատորիան կարող է օգտակար լինել գյուղացիական տնտեսություններին հողի որակի որոշման գործում: Այս ուղղությամբ կատարվող հետևողական աշխատանքների արդյունքում քոլեջը կարող է դառնալ տարածաշրջանի գյուղատնտեսական-գիտական կենտրոն, ինչպես նաև Երևանի պետական ագրարային համալսարանի մասնաճյուղ:

Հաշվի առնելով այս ամենը, քոլեջի երկար տարիների փորձն ու որակյալ մասնագետների առկայությունը, ինչպես նաև տարածաշրջանի բնակչության կողմից եղած պահանջները՝

- Դիմել ՀՀ ԿԳ նախարարություն՝ բարձրացնելով Ստեփանավանի գյուղատնտեսական քոլեջում Երևանի պետական ագրարային համալսարանի մասնաճյուղ բացելու հարցը:



- Աջակցել քոլեջին մեծացնելու քոլեջի հողի անալիզի մինի լաբորատորիան՝ օգնելով գյուղացիական տնտեսություններին՝ որոշելու հողի որակը, բերքավորությունը և այլն....:
- Քոլեջի մասնագետների միջոցով կազմակերպել համայնքի ֆերմերների համար նախատեսված գյուղատնտեսական, անասնաբուժական և տնտեսագիտական բնույթի խորհրդատվական դասընթացներ և բիզնես-ծրագրեր՝ արտադրությունը զարգացնելու և ժամանակակից շուկայական պահանջներին համահունչ վարելու ուղղությամբ:
- Հնարավոր ծրագրերի միջոցով նպաստել քոլեջի շենքային պայմանների և լաբորատոր նյութատեխնիկական բազայի բարելավմանը, քանդել քոլեջի՝ երկրաշարժից հետո վթարային դարձած նախկին վարչական շենքն ու ավտոտնակները, որոնք վտանգ են ներկայացնում ուսանողության համար, կառուցել մարզադահլիճ և հանդիսությունների դահլիճ, ապահովել մշտական ջրահոսքով:
- Հնարավոր ծրագրերի մեջ ներառել Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի մասնաճյուղի ընդլայնմանը, նոր մասնաշենքի կառուցմանն ու նյութատեխնիկական բազայի համալրմանն ուղղված միջոցառումներ:

3.14. Մշակույթ

Մշակութային միջոցառումներ և ժամանց

Նախաձեռնել համայնքի կրթամշակութային կյանքն աշխուժացնող միջոցառումներ՝

- Կազմակերպել համաքաղաքային երգի, պարի, ասմունքի, թատերական ներկայացումների միջոգորոցական և համաքաղաքային մրցույթ-փառատոններ՝ հայտանբերելով նոր տաղանդավոր երեխաների ու պատանիների:
- Ստեղծել <<Գիտակների ակումբ>>՝ այնտեղ կազմակերպելով <<Ինչ, որտեղ, երբ>> ինտելեկտուալ բնույթի խաղեր, բրեյն-ոինգներ, կոնֆերանսներ և այլն, որին կարող են մասնակցել ինչպես քաղաքի ուսումնական հաստատությունների սաները, այնպես էլ հիմնարկ-ձեռնարկությունների աշխատակիցներ ու ազատ քաղաքացիներ: Դրանով իսկ ստեղծել համայնքի գիտակների բազա և համախմբել նրանց:
- Պարբերաբար կազմակերպել և անցկացնել ձեռքի աշխատանքների՝ (կերպարվեստ, գորելեն, ասեղնագործություն, գորգագործություն, քանդակագործություն, կոլաժ....)



ցուցահանդեսներ ու մրցույթներ ինչպես դպրոցահասակների, այնպես էլ մեծահասակների շրջանում՝ խրախուսելով հաղթողներին:

- Նպատակ ունենալով ի հայտ բերել համայնքի ստեղծագործող ուժերին՝ կազմակերպել ստեղծագործական մրցույթներ /արձակ և չափածո ստեղծագործություններ, թեմատիկ մրցութային շարադրություններ/, հաղթող ստեղծագործությունները տպագրել մամուլում:
- Վերականգնել քաղաքային թատրոնի գործունեությունը:
- Մշակույթի պալատում ստեղծել ֆիլմերի ցուցադրման փոքրի կինոթատրոն:
- Ապահովել համայնքի մասնակցությունը միջհամայնքային, մարզային, հանրապետական և միջազգային մրցույթ-փառատոններին:
- Կազմակերպել համաքաղաքային մասսայական տոնակատարություններ (<<Ծաղկի տոն>>, <<Լոռվա Ձմեռ>>, <<Երգի տոն>> ...) և մշակութային տարաբնույթ միջոցառումներ, համերգներ, ցերեկույթներ, գրական-երաժշտական կոմպոզիցիաներ՝ նվիրված տարվա հորեյաններին, կարևոր պետական, միջազգային և համաշխարհային տոներին և այլն:
- Աջակցել դրսից հյուրախաղերով Ստեփանավան եկող թատերախմբերին, պարային և երաժշտական խմբերին, երգիչ-երգչուհիներին և արժեքավոր արտիստներին՝ ըստ պատշաճի կազմակերպելով նրանց ելույթները ստեփանավանցի հանդիսատեսի համար:

Մշակութային և արտադպրոցական ուսումնական հաստատությունների շենքային և գույքային պայմանների բարելավում

- Ստեփանավանի արվեստի դպրոցում ստեղծել նոր բաժիններ: Բարելավել դպրոցի շենքային պայմանները. Հնարավոր ծրագրերի առկայության դեպքում արվեստի դպրոցի համար կառուցել նոր քարե հարմարավետ շենք:
- Իրականություն դարձնել նախկին բաղնիքի շենքը <<Հայորդաց տուն>> դարձնելու Հայ Առաքելական եկեղեցու կողմից դեռևս 10 տարի առաջ մշակված ծրագիրը:
- Ստեփանավանի արվեստի դպրոցի և երաժշտական դպրոցի համար ձեռք բերել նոր մասնագիտական գույք՝ մասնավորապես երաժշտական նվագարաններ և



տեխնիկական սարքավորումներ, իսկ մշակույթի պալատի համար՝ մշակութային հանդերձանքներ՝ տարազներ և թատերական կերպարային հագուստներ:

- Կարգավորել երաժշտական դպրոցի և մշակույթի պալատի ջեռուցման խնդիրը: Շենքն ունի ջեռուցման համակարգ, սակայն նորմալ չի տաքանում:
- Ծրագիր մտցնել ՀՀ մշակույթի նախարարությանը պատկանող Ստեփանավանի մշակույթի և ժամանցի կենտրոնի հիմնանորգումը և տանիքի նորոգումը, որը քաղաքի համար ունի նաև պատմամշակութային կարևոր արժեք, քանի որ այստեղ է գտնվում Ստեփան Շահումյանի մեմորիալ տնակը:

Պատմամշակութային ժառանգության պահպանություն

- Բարելավել Ստեփան Շահումյանի տուն-թանգարանի գործունեությունը, պահպանել թանգարանային հավաքածուների ամբողջականությունը: Քաղաքի պատմության թանգարան ստեղծելու նպատակով ձեռնամուխ լինել Լոռե-Ջալալօղլի-Ստեփանավանիի պատմությանն ու կենցաղին առնչվող պատմամշակութային արժեքների, գեղարվեստական ստեղծագործությունների, լուսանկարների և այլ նյութական հավաքածուների ձեռքբերմանը, տվյալների շտեմարանի ստեղծմանը:

Նպատակ ունենալով ժամանակի մոռացությունից փրկել քաղաքի ու նրա հետ կապված մարդկանց պատմությունը՝

- Գոտիավորել Ստեփանավանի թիվ 1 գերեզմանատանը գտնվող Ջալալյանների և Հովհաննես Թումանյանի առաջին սիրո՝ Տիգրան Տեր-Դավթյանի աղջկա՝ Վարսենիկի գերեզմանոցները՝ դրանք ներառելով քաղաք այցելող զբոսաշրջիկների երթուղու մեջ:
- Հուշատախտակներ փակցնել Ստեփանավանում գտնվող այն տների վրա, որտեղ ապրել են անվանի մարդիկ կամ նրանց հարազատները, մասնավորապես՝ Սոս Սարգսյանի, Մացակ Պապյանի, Մայակովսկու բնակարաններին:
- Ստեփանավանի <<Բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի պոլիկլինիկական մասնաշենքի մոտ տեղադրել ցուցանակ այն մասին, որ այդտեղ նախկինում եղել է մանկատուն, որտեղ ապաստան են գտել նաև Եղեռնից մազապուրծ փախած գաղթական երեխաներ:



Հետամուտ լինելով գտնել այդ երեխաների անունները՝ դրանք ևս ավելացնելով ցուցատախտակի վրա:

- Ստեփանավանի կենտրոնական հրապարակում տեղադրել ցուցանակ՝ Ստեփանավանի ներկա պատմությունը, բարքերն ու առօրյան, մշակույթը, տեսարժան վայրերն ու չքնաղ բնությունը ներկայացնող լուսանկարներով, իսկ նախկին Չերյոմուշկա թաղամասում երկրաշարժի զոհերի հիշատակի համար նախատեսված հուշակոթողի մոտ՝ ցուցանակ մինչեւ երկրաշարժյան Ստեփանավանի մասին տեղեկատվությամբ և լուսանկարներով:
- Հատուկ ուշադրություն ցուցաբերել քաղաքի տարածքում գտնվող պատմամշակութային վայրերի և հուշարձանների նկատմամբ, մաքուր և բարեկարգ պահել դրանց տարածքները՝ Չեչմանիս, Մայորի ձոր, Սուրբ Նշան մատուռ, Լոռի բերդաքաղաք, Անհայտ զինվորի հուշարձանի տարածք և այլն: Հետևել, որպեսզի պահպանվի քաղաքում գտնվող պատմամշակութային արժեք ունեցող շենք-շինությունների (ոստիկանության շենք, սանեպիտկայանի շենք, նախկին բաղնիքի շենք, մշակույթի պալատ...) ճարտարապետական տեսքը:
- Այգում տեղադրված խոյի արձանի գույգը գտնվում է Չարենց փողոցում: Միատեղել այդ քարե արձանները, որոնք մշակութային արժեք ներկայացնող հնություններ են:

Գրադարան

- Բարելավել Ստեփանավանի կենտրոնական գրադարանի շենքային (տանիքի, պատերի, սանհանգույցի, ջրագծի և կոյուղագծի վերանորոգում) և գույքային պայմանները (գրադարակներ, սեղան-աթոռներ՝ հատկապես ընթերցասրահի համար նախատեսված, ժամանակակից տեխնիկական միջոցներ):
- Պահպանել գրադարանի գրքային ֆոնդը՝ միաժամանակ նվիրատվությունների և տարբեր ծրագրերի միջոցով համալրելով նոր գեղարվեստական և մասնագիտական գրքերով:
- Սկսել գրադարանի գրքային ֆոնդի էլեկտրոնային տարբերակների մշակումը՝ առաջնահերթությունը տալով ուսանողների շրջանում պահանջարկ ունեցող մասնագիտական գրականության էլեկտրոնային տարբերակների ստեղծմանը:



- Բարձրացնել գրադարանի սպասարկման աշխատանքների արդյունավետությունը՝ հնարավորության դեպքերում վերապատրաստման ուղղարկելով գրադարանի աշխատակիցներին:

Մշակութային համագործակցություն

Շարունակել մշակութային համագործակցությունը Ֆրանսիայի Դեսին քաղաքի հետ, ամրապնդել նոր հաստատված մշակութային կապերը Բելառուսի Բրասլավ քաղաքի հետ և վերականգնել նախկին կապերը Իտալիայի Մոնսումանո-Տերմե քաղաքի հետ՝ համատեղ իրականացնելով տարբեր մշակութային միջոցառումներ՝ ճանաչել միմյանց մշակույթները և մշակույթի միջոցով նպաստել բարեկամ քաղաքների կապերի ամրապնդմանը:

3.15. Առողջապահություն, ֆիզիկական կուլտուրա և սպորտ

Առողջապահություն

- Դիմել ՀՀ առողջապահության նախարարությանը՝ Ստեփանավանի <<Բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի բուժաշխատողների վերապատրաստման, համակարգը նոր երիտասարդ կադրերով համալրելու, բուժապասարկման նյութատեխնիկական բազան նոր ժամանակակից բուժսարքավորումներով համալրելու հետ կապված հարցերով:
- Ամրապնդելով կապերը <<Գերմանական Կարմիր Խաչ>> ընկերության հետ (որի կողմից երկրաշարժից հետո կառուցվել է Ստեփանավանի հիվանդանոցը)՝ դիմել պոլիկլինիկական և հիվանդանոցային մասնաշենքերի շենքային պայմանների վերանորոգման (տանիքի կապիտալ վերանորոգում, ներքին պատերի ներկում հրակայուն ներկով, ջրամատակարարական ցանցի և սանհանգույցների բարեկարգում...) և բուժապասարկման նյութատեխնիկական բազան ժամանակակից սարքավորումներով համալրելու խնդրանքով:

Ֆիզիկական կուլտուրա և սպորտ

- Ավարտին հասցնել Ստեփանավանի նախկին մարզադպրոցի հենքի վրա կառուցվող ըմբշամարտի դահլիճի շինարարությունը:



- Կարգավորել մարզադպրոցի ջեռուցման հարցը. շենքը գազաֆիկացված է, սակայն շինարարական ինչ-ինչ խնդիրների և փորձնական քննությունը չանցնելու պատճառով ջեռուցման համակարգը չի շահագործվում, ապահովել մշտական տաք և սառը ջրահոսքով՝ հնարավոր դարձնելով մարզադպրոցի լոգախցիկների օգտագործումը մարզումներից հետո:
- Համայնքում լողը զարգացնելու նպատակով դիմել ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությանը՝ փակ լողավազան կառուցելու հարցով, մտածել դրա նախագծման շուրջ:
- Տարբեր հիմնադրամների և կառավորության ծրագրերի աջակցությամբ կառուցել պարզ տիպի խաղահրապարակներ՝ նպաստելով համայնքում սպորտի զարգացմանն ու առողջ ապրելակերպին:
- Կազմակերպել առողջ ապրելակերպին նպաստող համաքաղաքային սպորտային տարբեր միջոցառումներ, անցկացնել տարբեր մարզաձևերի մրցաշարեր՝ ինչպես քաղաքի կրթօջախների, հիմնարկ-ձեռնարկությունների թիմերի, այնպես էլ քաղաքի տարբեր թաղամասերի մարզասերներից կազմված թիմերի միջև, ակտիվորեն մասնակցել միջհամայնքային, մարզային, հանրապետական և միջազգային մրցաշարերին, խրախուսել հաղթող մարզիկներին:
- Տարվա տաք եղանակներին՝ հատկապես ամռանը, շաբաթական 1-2 անգամ քաղաքի անտառամերձ գոտում (նախկին Պիտովնիկի տարածք) կազմակերպել ֆիզկուլտուրայի համաքաղաքային բացօթյա պարապմունքներ՝ այդտեղ հասնելով առավոտյան վազքով:
- Մարզադպրոցում ստեղծել տարբեր մարզաձևերի նոր խմբեր՝ բասկետբոլի, թենիսի, լողի և այլն, ներառել նաև հաշմանդամային սպորտաձևեր (հանդբոլ, բոչիա, գուրոլ...)՝ նպաստելով համայնքում հատուկ կարիք ունեցող մարդկանց ինտեգրմանը հասարակական կյանքի և սպորտի մեջ, որը բխում է նաև <<Հաշմանդամություն ունեցող անձանց մասին>> ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթներից, որը Հայաստանը վավերացրել է 2010թ. նոյեմբերի 22-ին: Այս նպատակով համագործակցել Ստեփանավանում հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող <<Լիարժեք կյանք>> հկ-ի հետ:



3.16. Աշխատանք և սոցիալական ապահովություն

- Խթանել համայնքում մանր և միջին բիզնեսի զարգացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը:
- Ստեփանավան-Դեսին համագործկցության արդյունքում իրականացնել ներդրումային քաղաքականության ծրագրեր՝ մշակելով տեղական հումքի արտադրության վերամշակման, հյուրերի, կարտոֆիլի, եգիպտացորենի արտադրության և արտահանման ծրագրեր:
- Քաղաքացիներին ընդգրկել վճարովի հասարակական աշխատանքների կազմակերպման մեջ:
- Միջոցներ ձեռնարկել հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ:

3.17. Ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ

Տեղեկատվական և այլ կենտրոններ

- Քաղաքապետարանի առաջին հարկում ստեղծել համայնքի տեղեկատվական կենտրոն, որի աշխատակիցը պետք է օգնի և տեղեկատվություն տա քաղաք այցելած հյուրերին, զբոսաշրջիկներին և այլ մարդկանց քաղաքի, նրա տեսարժան վայրերի, հիմնարկ-ձեռնարկությունների, սպասարկման օբյեկտների և այլնի մասին, ապահովի քաղաքի քարտեզով և տեղեկատվական այլ նյութերով՝ գրքույկներ, տեսասկավառակներ և այլն...
- Աջակցել քաղաքի ակտիվ երիտասարդներին և ուսանողությանը՝ ստեղծելու երիտասարդական կենտրոն, որը կզբաղվի երիտասարդների մշակութային կյանքի, հանգստի և բովանդակալից ժամանցի կազմակերպման, հասարակական ակտիվության և մասնակցային կառավարման, իրավահոգեբանական աջակցման, տարբեր ծրագրերի ու նախաձեռնությունների իրականացման և երիտասարդության համախմբման հարցերով:



- Աջակցել <<Հաշմանդամություն ունեցող երեխաների ցերեկային կենտրոն>>-ի զարգացմանը և գործունեության ընդլայնմանը, այդ երեխաների հասարկության մեջ ինտեգրմանը և հանգստի կազմակերպմանը՝ ամառային ճամբարների միջոցով:
- Համագործակցել համայնքում գործող հասարակական կազմակերպությունների և տարբեր կենտրոնների հետ, աջակցել նրանց կողմից առաջարկվող ծրագրերի և գաղափարների իրականացմանը, պլանավորել և իրականացնել համատեղ միջոցառումներ՝ նպաստելով համայնքում մասնակցային կառավարման ձևավորմանը:

Հանրային կապեր, տեղեկատվություն

- Շարունակելով համագործակցությունը մարզային և հանրապետական լրատվամիջոցների հետ՝ լուսաբանել համայնքի խնդիրները, կատարված աշխատանքներն ու միջոցառումները, համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի գործունեությունը՝ ապահովելով ՏԻՄ-ի թափանցիկությունն ու հանրության տեղեկացված լինելու իրավունքը:
- Դիմել ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն՝ Ստեփանավանին տեղական հեռուստաալիք տրամադրելու հարցով, որը կհեռարձակի ինչպես տեղական բնույթի հաղորդումներ և տեղական լուրեր, այնպես էլ կվերահեռարձակի ստեփանավանցիների կողմից պահանջարկ ունեցող Ռուսաստանի հանրային հեռուստաընկերության (ОРТ) հաղորդումները, որը ներկայումս համայնքում հեռարձակվում է միայն արբանյակային ավեհավքի միջոցով:
- Աջակցել նորաստեղծ հեռուստակենտրոնի գործունեությանը, ստեղծել հաղորդումներ Ստեփանավանի անցուղարձի, դեպքերի ու դեմքերի, տեսարժան վայրերի ու հուշարձանների պատմության, բնության, ներկա ու ապագա խնդիրների մասին, նորից եթեր հեռարձակել քաղաքապետարանի լրատվության բաժնի կողմից պատրաստված <<Համայնքային անցուղարձ>> հաղորդումը:
- Միջոցներ ձեռնարկել տեղական <<Ստեփանավան>> թերթի վերաբցման համար կամ նախաձեռնել տեղական մեկ այլ թերթի ստեղծումը, շարունակել համագործակցությունը մարզային և հանրային թերթերի ու ամսագրերի հետ, աջակցել <<Լիարժեք կյանք>> թերթի գործունեությանը:



- Նպաստել <<Ռադիո հայ Ստեփանավան>> ռադիոընկերության գործունեությանը՝ առաջարկելով ընդլայնել լրատվական դաշտն ու սեփական հաղորդումների արտադրությունը:
- Մեծացնել Ստեփանավանի քաղաքապետարանի պաշտոնական կայքէջի ծավալները, համալրել այն նոր բաժիններով՝ տեսադարան, ձայնադարան, պատկերասրահ և այլն: Սրանով իսկ ստեղծել քաղաքի միջոցառումների և պատմության էլեկտրոնային արխիվ-ալբոմ:
- Համագործակցություն սկսել ինտերնետային տարբեր լրատվամիջոցների՝ (new.am, lorinews.com ...) հետ, ներկայացնել Ստեփանավան քաղաքն ու Ստեփանավանի քաղաքապետարանը սոցիալական ցանցերում՝ ֆեյսբուք, թվիթեր և այլն:
- Կապեր հաստատել Բելառուսի Վիտեբսկի մարզի Բրասլավ քաղաքի լրատվամիջոցների հետ՝ միմյանց տրամադրելով տեղական լուրեր Ստեփանավան-Բրասլավ եղբայր քաղաքներից և կատարելով փոխհանձնում: Վերականգնել կապերը Ֆրանսիայի քույր քաղաք Դեսինի <<Ռադիո Արմենիա>> ռադիոընկերության հետ՝ նպաստելով ոչ միայն Ստեփանավան-Դեսին, այլև Հայաստան-Սփյուռք կապի ամրապնդմանը:
- Հրատարակել տեղեկատվական գրքույկներ և նկարահանել Ստեփանավանի մասին պատմող փաստավավերագրական ֆիլմ, որտեղ կներկայացվի համայնքն իր բնական ռեսուրսներով, առողջարանային բարենպաստ պայմաններով, տեսարժան վայրերով, պատմամշակութային արժեքներով, իր հնամենի պատմությամբ, ավանդույթներով, բարի ու հյուրընկալ մարդկանցով, զարգացման նոր միտումներով ու հեռանկարով: Սա հնարավորություն կտա համայնքը և նրա դրական կողմերը տեսանելի և գրավիչ դարձնել հայ և արտասահմանցի զբոսաշրջիկների, գործարարների ու ներդնողների համար, շարժել նրանց հետաքրքրությունը Ստեփանավանի նկատմամբ, շահագրգռել, որպեսզի իրենց հանգիստը կազմակերպեն առողջարանային գոտորիկ քաղաքում, ներդրումներ կատարեն այստեղ՝ նպաստելով համայնքի զարգացմանը:



3.18. Քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքների պաշտպանություն

- Պաշտպանել համայնքի քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների շահերն ու իրավունքները:
- Աջակցել համայնքային ենթակայությամբ գործող հիմնարկ ձեռնարկություններին (4 ՆՈՒՀ, մշակույթի պալատ, արվեստի և երաժշտական դպրոցներ, մարզադպրոց, գրադարան)՝ ստանալու անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում:

3.19. Արտակարգ իրավիճակներ և քաղաքացիական պաշտպանություն

Հայաստանի Հանրապետության կառավարության 2012թ. հոկտեմբերի 25-ի թիվ 1351-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի պահանջների կատարման նպատակով՝ Ստեփանավան համայնքի զարգացման քառամյա ծրագրում ներառել սեյսմիկ ռիսկերի նվազեցման հետևյալ միջոցառումները՝

- Ուսումնասիրել Ստեփանավան համայնքի հատուկ կարևորության օբյեկտները՝ քաղաքապետարանի վարչական շենք, «Արմենտել»-ի շենք, Ձորագետի կամուրջ, «Ստեփանավան բժշկական կենտրոն» ՓԲԸ-ը, համայնքի ջրամատակարարման 3 ջրամբարներ, էլ. էներգիայով սնուցող բարձր, միջին և ցածրավոլտ հզորության տրանսֆորմատորային կայաններ, ԱԻ-ի պայմաններում համայնքի կենսագործունեությունը ապահովող «Հառուսգազարդ»-ի տարածքային ծառայություն և այլն, վերհանել դրանց սեյսմիկ խոցելիության ռիսկերը՝ հնարավորության դեպքում կիրառելով սեյսմիկ շինարարության նոր մեթոդներ :
- Ստեղծված արագ արձագանքման ուժերի միջոցով մշակել նորմատիվ փաստաթղթեր, որոշել համայնքի բազմաբնակարան շենքերի սեյսմիկ խոցելիության աստիճանը՝ ներգրավելով սեյսմոլոգների և երկրաբանների:
- Ուսումնասիրել և վերհանել արտակարգ իրավիճակների ժամանակ ապաստարանների և թաքստոցների առկայությունը, նրանց տեխնիկական վիճակը, անհրաժեշտության դեպքում կազմել դրանց նկարագիրը և ներկայացնել առաջարկություններ հայտնաբերված թերությունների վերացման վերաբերյալ:



- Մշտական ուշադրության կենտրոնում պահել բնակչության իրազեկման և ազդարարման միջոցների սարքին և գործուն վիճակը, համայնքի կազմակերպություններում և բնակչության շրջանում պարբերաբար անցկացնել ուսուցումներ՝ երկրաշարժի և արտակարգ իրավիճակների ժամանակ նրանց ճշգրիտ և արհեստավարժ գործողությունների վերաբերյալ”

3.20. Տուրիզմ

Ստեփանավան համայնքի քառամյա ծրագրի հիմնական նպատակներից մեկն էլ՝ վերականգնել Ստեփանավանի առողջարանային և տուրիստական նշանակության քաղաք լինելու համաբավը՝ ստեղծելով տուրիզմի զարգացման համար բարենպաստ պայմաններ:

- Տուրիզմի զարգացման այցեքարտ դարձնել Ստեփանավանի հրաշալի բնակլիմայական պայմաններն ու այստեղ արտադրվող, էկոլոգիապես մաքուր, առողջ բնամթերքը: Այդ նպատակով համագործակցելով տեղական և գյուղական համայնքների բնամթերք արտադրող անհատների և կազմակերպությունների հետ՝ առաջարկել նրանց բացել «Տուրիստի համար», «Առողջ բնամթերք», «Ստեփանավանաի բնության բարիքները» և նմանատիպ վաճառքի կետեր, աջակցել արտադրողներին գովազդային թերթիկներով, տեսահոլովակներով, ինտերնետով գովազդել այն սննդատեսակները, որոնք էկոլոգիապես անաղարտ են և օգտակար առողջության համար:
- Հետևողական լինել այն սեփականատերերի նկատմամբ, ովքեր քաղաքի անտառամերձ գոտում հանգստյան գոտիների և հյուրանոցային համալիրների կառուցապատման նպատակով գնել են հողատարածքներ, սակայն մինչև հիմա նպատակային նշանակությամբ չեն օգտագործել:
- Առաջիկա 4 տարիների ընթացքում Անտառային փողոցի ռեկրեացիոն նշանակության գոնայում և Վիրահայոց փողոցի երեք լճերի շրջակայքում կատարել նպատակային հողահատկացումներ՝ ժամանակակից պանսիոնատներ, հյուրանոցային համալիրներ, հանգստի և զբոսաշրջության համար նախատեսված օբյեկտներ կառուցելու նպատակով:
- Հետևողական լինել, որպեսզի կառուցվող հանգստյան տներն ու ֆիզկուլտ-առողջարանային համալիրները համապատասխանեն հանգստի համար նախատեսված



ժամանակակից չափորոշիչներին, ներառեն կոնֆերանսների և հանդիսությունների համար նախատեսված մեծ և փոքր դահլիճներ, մարզասրահ, լողավազան և այլն...

- Ձորագետի կիրճում նախատեսել վարձակալությամբ տրվող տարածքներ՝ դրանք հատկացնելով հանգստացողների և զբոսաշրջիկների ժամանցն ու հանգիստը կազմակերպել ցանկացող ֆիզիկական և իրավաբանական անձանց:
- Ստեփանավանի հետ բարեկամացած Դեսին և Բրասլավ քաղաքների հետ համատեղ մշակել և իրականացնել տուրիստական տարբեր ծրագրեր, այդ թվում նաև՝ էկոտուրիզմի ծրագիր:
- Տուրիզմի զարգացման և տուրիստներին աջակցելու նպատակով Ստեփանավանում ստեղծել տեղեկատվական կենտրոն՝ տուրիզմի ոլեցույց:
- Քաղաքի խորհրդանիշ ունենալու նպատակով հայտարարել ստեղծագործական մրցույթ: Մրցույթում հաղթած քաղաքի խորհրդանիշը տարբեր եղանակներով բազմացնել և որպես հուշանվեր առաջարկել Ստեփանավան այցելող տուրիստների, հյուրերին:
- Պատրաստել քաղաքը ներկայացնող բուկլետներ, գրքույկներ, տեսասկավառակներ, ինչպես նաև քաղաքի քարտեզ՝ ներառելով նաև բոլոր տեսարժան վայրերն ու սպասարկան օբյեկտները:

4. ՊԵՏԱԿԱՆ, ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Առաջիկա 4 տարիներին Ստեփանավան համայնքը նախատեսում է շարունակել համագործակցությունը <<Հայաստան համահայկական հիմնադրամ>>, <<Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամ>>, <<Լինսի հիմնադրամ>>, <<Վորլդ Վիժն>>, <<Մնունդ աշխատանքի դիմաց>> , <<Վարձատրվող հասարակական աշխատանք>>, <<Այթիայ>> և այլ պետական ու միջազգային կազմակերպությունների ու հիմնադրամների հետ՝ իրականացնելով համայնքի զարգացման քառամյա ծրագրով նախատեսված բարեփոխումներն ու ծրագրերն՝ ըստ առաջնահերթության, որոնց հրատապությունը կորշվի համայնքի բնակչության և ավագանու կողմից: Ծրագրերի մի մասն էլ կլուծվի



կառավարության կողմից իրականացվող հրատապ ծրագրերի, պետական ու մարզային տարբեր ծրագրերով նախատեսված միջոցառումների միջոցով, ինչպես նաև արտասահմանյան բարեկամ քաղաքների հետ համագործակցության, համայնքային բյուջեի, մասնավոր հատվածի ու կազմակերպությունների նախաձեռնած տարբեր աշխատանքների ու միջոցառումների շնորհիվ:

